

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ

**Երկու հազար տասնինը թվականի մայիսի ութին
քաղաք Երևան**

Բնապահպանական հանրային դատարանը՝ Նազելի Վարդանյան, Հրանուշ Խառատյան, Զարուհի Հովհաննիսյան, Ինգա Զարաֆյան, Սաթիկ Բադեյան կազմով

Քարտուղարությամբ՝ Վիկտորյա Բուռնազյանի

Մասնակցությամբ՝ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փորձագետ Ռոզա Ջուլիակյանի, ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի ղեկավար Էվելինա Ղուկասյանի, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Արայիկ Հունանյանի, «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնության անդամ Լևոն Գալստյանի, նույն նախաձեռնության անդամ Աննա Շահնազարյանի, «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ»-ի տնօրեն Վարդան Մամիկոնյանի, նույն հիմնադրամի փորձագետ Անուշ Առաքելյանի, Էներգետիկ փորձագետ Էդվարդ Արզումանյանի, «Հասարակական պաշտպանների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Արամ Գրիգորյանի, «Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի» 3-րդ աշխատանքային խմբի համակարգող Ամալյա Համբարձումյանի, «Խազեր» Էկոլոգամշակութային ՀԿ-ի փորձագետ Արամ Գաբրիելյանի, «Human Right House» ՀԿ-ի անդամ Մարինե Զաքարյանի, նույն ՀԿ-ի անդամ Անուշ Մանուկյանի, Երևանի Օրինու կենտրոնի համակարգող Միլվա Այվազյանի, «Մարտունու կանանց խորհուրդ» ՀԿ-ի նախագահ Անահիտ Գևորգյանի, նույն ՀԿ-ի անդամ Եղիազար Դավթյանի, ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտաշխատող Արշակ Մաթևոսյանի, ՀՀ անվտանգության խորրդի փորձագետ Արմինե Պետրոսյանի, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի անդամ Էմմա Անախասյանի, «Շողեր Միություն» ՀԿ-ի նախագահ Հասմիկ Ասլանյանի, ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության Ջրային պետական կոմիտեի իրավաբան Հայկ Միրունյանի:

Դիմումատու՝ «Բլեջան» ՀԿ-ի նախագահ Լիանա Ասոյանի

Պատասխանողի ներկայացուցիչներ՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Արայիկ Հունանյան և «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ»-ի տնօրեն Վարդան Մամիկոնյան:

Դոնբաց դատական նիստում, քննելով «Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող «Սևանա լճին սպառնացող վտանգների մասին» բնապահպանական հանրային գործն՝ ըստ Լիանա Ասոյանի դիմումի,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Սևանա լիճը գտնվում է Գեղարքունիքի մարզում՝ ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Միջին խորությունը 46.8 մ է, ամենախոր վայրը՝ 83 մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32, 92 մլրդ մ³ է: Լիճ են թափվում 28 մեծ ու փոքր գետակներ, որոնցից են՝ Արգիճի, Մասրիկ, Գավառագետ, Կարճաղբյուր, Վարդենիս, Ձկնագետ, սակայն սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդանը: Վերջինիս միջոցով ջրերի տարեկան արտահոսքը Սևանից կազմում է 0.7 կմ³:

Սևանա լճի ջրերը Հրազդան գետի միջոցով ոռոգում են Արարատյան դաշտը: Հրազդան գետի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանները ձևավորում են հանրապետության ամենամեծ՝ Սևան-Հրազդան հիդրոհանգույցը:

Խորհրդային, ինչպես նաև անկախության տարիներին էներգետիկ պահանջների և Սևանա լճի ջրահավաք ավազանում և Արարատյան հարթավայրում ինտենսիվ զարգացող գյուղատնտեսական կարիքների բավարարման նպատակներով Սևանի ջրերի անխնա օգտագործման հետևանքով լճի ջրի ծավալները կրճատվել են 40%-ով, խորությունը՝ 15,95%-ով, իսկ հայելու մակերեսը՝ 156կմ-ով: Սևանա լճի ջրահավաք ավազանում ծավալվող հանքարդյունաբերությունը՝ Սոտքի ոսկու ու Շորժայի դունիտ-պերիդոտիտային, իսկ վերջին տարիներին նաև Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրերի, ինչպես նաև Սևանա լճի ավազանում բնակվող բնակչության աճի, ափամերձ տարածքներում հանգստյան և հասարակական սննդի կետերի տարերայնորեն գոյացման, այդ օբյեկտներից լիճ արտահոսվող կոմունալ-կենցաղային ջրերի չմաքրման, ափամերձ տարածքներում կոմունալ-կենցաղային և շինարարական թափոնների տեղադրման հետևանքով էականորեն վատթարացել է նաև լճի ջրի որակը, հաճախակի են դարձել լճի ճահճացման և ծաղկման երևույթները, կրճատվել են ձկնապաշարները, իսպառ վերացել են որոշ ձկնատեսակներ, այդ թվում, էնդեմիկ տեսակները:

Տնտեսական գործունեության ծավալմանը և Սևանա լճի արհեստական իջեցմանը զուգահեռ անցած դարի կեսերից Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում սրությամբ է դրվել կենսաբազմազանության պահպանման խնդիրը, որը մինչ օրս կարիք ունի լուծման՝ չնայած ծախսված հսկայական միջոցներին ու ձեռնարկված միջոցառումներին:

Սևանա լճի էկոհամակարգի վերականգման և պահպանման նպատակով ձեռնարկվել են մի շարք մեծածավալ միջոցառումներ: 1978 թվականին ստեղծվել է «Սևան» ազգային պարկը: Ջրի մակարդակը վերականգնելու համար կառուցվել է Արփա-Սևան ջրատարը(48.3 կմ երկարություն, 1963թ–1981թ.), որով Սևանա լիճ պետք է տարեկան տեղափոխվեր մինչև 300մլն խմ ջուր, ապա՝ Որոտան-Արփա ջրատարը (21, 6 կմ երկարություն՝ 2004թ.), որը կառուցվելուց հետո չի գործել:

«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման մասին» ՀՀ օրենքում ամրագրված է Սևանա լճի մակարդակը մինչև 2030 թվականը բարձրացնել 6,5 մ-ով: Կառուցվել են Արփա-Սևան, ապա Որոտան-Արփա ջրատար թունելները: Հիմնականում 2002 թվականից սկսած կրճատվել են ջրբացթողումների ծավալները: Արդյունքում լճի մակարդակը մոտ 3,5 մ բարձրացել է: Սակայն դեռևս

շարունակում է խախտված մնալ լճի բնական էկոհավասարակշռությունը, այն գտնվում է անկայուն վիճակում:

2. Դիմումատուի փաստաթղթերը և իրավական դիրքորոշումը

Սևանա լճի հիմնախնդիրներն են՝

ա/ Սևանա լճի ափերի ապօրինի մասնավորեցումը և կառուցապատումը, հանգստացողների իրավունքների խախտումը:

1960-70-ական թվականներին ճարտարապետները Սևանա լճի հանգստյան տներն ու սրճարանները կառուցում էին ոչ թե լճի ափին, այլ ափից շատ հեռու՝ Սևանի հին ճանապարհի մոտ. նրանք հավատում էին, որ մի օր Սևանա լճի ջրի մակարդակն այնքան կբարձրանա, որ լճի ցամաքած ափերը նորից կանցնեն ջրի տակ: Այդ հավատը կապված էր լճի փրկության հետ, քանի որ ջրի մակարդակի բարձրացումն անհրաժեշտ է, որպեսզի լիճը չճահճանա: Սակայն երկրի անկախացումից հետո՝ 1990 - ական թթ-ից մինչև այսօր, Սևանա լճի ափին կառուցվել են բազմաթիվ շինություններ՝ առանձնատներ, հյուրանոցներ, սրճարաններ, և շատ հաճախ դրանք կառուցվել են հենց ափին՝ 1908.0մ նիշից ցածր տարածքում՝ զբաղեցնելով այն գոտին, որը լճի մակարդակի բարձրացման դեպքում պետք է անցնի ջրի տակ:

ՀՀ իշխանությունները 2006թ-ին որոշեցին, որ կառուցապատման թույլատրելի նիշը 1908մ-ից պետք է իջեցնել 1905մ-ի ալիքի ազդեցության գոտու հաշվին՝ որոշելով որ Սևանա լճի ալիքն այլևս 4,5 մ չի լինելու, այլ 1,5:

Սևանա լճի տնտեսական գոտում՝ լճի ամբողջ երկայնքով, երկարաժամկետ վարձակալությամբ կառուցվել են հիմնական շինություններ, պարիսպներ, տներ, ամառանոցներ, որոնք խոչընդոտում են բնակիչների ազատ մուտքը դեպի լիճ, թույլատրելի նիշից ներքև կառուցվածներից շատերն էլ ամբողջությամբ արդեն ջրի տակ են:

ՀՀ կառավարության 18.12.2008թ. «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» N.1563-Ն որոշման 10-րդ կետի պահանջների համաձայն. «Լողափերի կազմակերպման համար ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող հողամասերի մակերեսների գումարային չափը չի կարող գերազանցել լողափի գոտու ընդհանուր տարածքի 80 տոկոսը՝ մնացած հատվածում ապահովելով հանրության կողմից լողափի անարգել օգտագործման հնարավորությունը»: Այսինքն՝ յուրաքանչյուր վարձակալ իր տարածքից 20 տոկոս ազատ պետք է թողնի հանրության օգտագործման համար: Որոշման 11-րդ կետը սահմանում է ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ լողափի և բուֆերային գոտիներում գտնվող տարածքների նկատմամբ կնքվող համապատասխան պայմանագրերում ամրագրվող պահանջները: Սակայն ոչ մի վարձակալ այդ կարգը չի պահպանել, քանի որ կառուցել են հիմնական կառույցներ, ինչի արդյունքում լճափերը հասանելի չեն հասարակությանը: Հասարակության դժգոհությունը մեղմելու համար մի քանի տարի առաջ ստեղծվեցին մի քանի հանրային լողափեր:

«Բլեջան» ՀԿ-ի հարցմանն ի պատասխան ՀՀ բնապահպանության նախարարությունը տեղեկացրել է, որ Սևանա լճի տարածքում առկա է 908 վարձակալ: Փորձել ենք ճշտել, թե դրանցից քանիսն են թույլատրելի նիշից ներքև կառուցապատում իրականացրել, քանի վարձակալված տարածքներ ունեն, դրանցից քանիսն են իրականացրել

կառուցապատումներ, կամ դրանցից քանիսն են 1905-մ ճիշտ վերսկսված, քանիսն են ապամոնտաժվել մինչ այժմ, ինչ միջոցներով, այդպես էլ պատասխան չստացանք: Նրանք մեզ ուղղորդեցին Կադաստրի պետական կոմիտե, չնայած, որ ՀՀ բնապահպանության նախարարը 28.09.2018թ. ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի խորհրդարանական լուսմների ժամանակ պատգամավորների հարցին պատասխանեց, որ շինությունների թիվը շուրջ 4000-ի է հասնում: Այստեղից պարզ է դառնում, որ ամեն վարձակալ ունի 1-ից ավելի շինություն: Այդ նույն օրը նախարարը նաև տեղեկացրեց, որ լճի ափին կան սեփականության իրավունքով տրված տարածքներ, մինչդեռ «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով հստակ սահմանված է լճի նկատմամբ սեփականության իրավունքը, այն է. «Սևանա լիճը և նրա էկոտոնային տարածքը պետական սեփականություն են և ենթակա չեն օտարման»:

Այսինքն՝ ակնառու է, որ ամեն տարի Սևանա լճից Արարատյան դաշտ ոռոգման նպատակով ջրառի կատարումը պատրվակ է ու արհեստածին, որն իրականում այլ գործոններից բացի, ունի նաև սեփականության իրավունքով կամ ապօրինի կառույցների տերերի շահերին սպասարկելու միտում:

բ/ Սևանա լճի ձկնապաշարների նվազումը և համայնքների աղքատացումը:

Փաստ է, որ մինչև 1930-ական թվականները Սևանա լճի հիմնական և էնդեմիկ ձկնատեսակները՝ իշխանը, կողակը և բեղլուն, բազմացել են բնական ճանապարհով: Տարիների ընթացքում տարբեր պատճառներով լճի էնդեմ ձկնատեսակները սկսեցին նվազել: Ներկա պահին իշխանի 2 տեսակն ընդհանրապես վերացել է, իսկ մյուս 2-ը գրանցված են Հայաստանի կարմիր գրքում:

Սևանի էնդեմիկ ձկնատեսակների պաշարները լճում վերականգնելու համար 1960-ական թվականներին հիմնադրվեցին Սևանի, Գավառի, Լիճքի և Կարճաղբյուրի ձկնաբուծարանները, որոնցից յուրաքանչյուրի ավագաններից տարեկան Սևանա լիճ է բաց թողնվել մինչև 15-20 միլիոն իշխանի, կողակի, բեղլուի մանրածուկ: Մասնագետների հավաստմամբ՝ միայն Գավառագետից ժամանակին վերցվել է 1200կգ ձկնկիթ, որից ստացվել է մինչև 18 միլիոն մանրածուկ:

ԽՍՀՄ փլուզման և նոր տնտեսակարգի հաստատման արդյունքում 1990-ական թվականներին սեփականաշնորհվեցին վերոնշյալ 4 գործարանները՝ տարիների ընթացքում մատնվելով անգործության:

Լճում ձկնապաշարի և էնդեմիկ տեսակների վերականգնման համար վերջին տարիներին պետական բյուջեից հսկայական միջոցներ են ծախսվել, լիճ է բաց թողնվել արհեստական պայմաններում աճեցված մեծածավալ քանակով իշխանի մանրածուկ: Այդ մանրածուկների էնդեմիկ լինելը թեպետ կասկածելի է, սակայն դրանց պահպանության համար ոչինչ չի ձեռնարկվում: Անարգել որսը կրում է շարունակական բնույթ:

Սևանի իշխանին փոխարինելու եկավ Չուղ և Լադոգա լճերից բերված սիգ ձուկը, որը շատ շուտ հարմարվեց լճի էկոհամակարգին:

Սևանի ձկնապաշարների ավելացման նպատակով Չուղ և Լադոգա լճերից բերվեց սիգ ձուկ, որը շատ շուտ հարմարվեց լճի էկոհամակարգին: 1983թ-ն Սևանա լիճն արդեն ուներ 12 հազար տոննա սիգի արդյունագործական պաշար: ՀՀ պետական իրավասու կառույցների հսկիչ/վերահսկիչ գործողությունների անարդյունավետության կամ անգործության արդյունքում ձկնագործությունն աճեց, սիգի պաշարները լճում նվազեցին, և այլևս լճում արդյունագործական ձկնապաշարներ չկան:

Թեպետ ձվադրման սեզոնին արգելվում է ձկնորսությունը, սակայն հանրապետության շուկաներում ու մայրուղիներում անարգել վաճառում են սիգր: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցները ամբողջ երկրի շուկաներից, մայրուղիներից բռնում ու առգրավում են ձուկը, սակայն ձուկն արդեն լճից հանվել է: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը չի կատարել իր գործը, ժամանակին դուրս չի բերել լճից որսամիջոցներն ու լողամիջոցները: Այս իրավիճակում ձկնագողության դեմ պայքարը կրում է ձևական բնույթ: Մեր ունեցած տվյալներով, հենց որսի արգելքի շրջանում ամեն օր լիճ է մտնում շուրջ 800 նավակ:

2007թ-ից սկսած՝ Գավառի Օրհուս կենտրոնն ամեն տարի հարցումներ ուղարկել տարբեր պատկան մարմինների պարզելու, թե ինչ իրավիճակ է այժմ ձկան որսի հետ կապված, տրվել են ոչ հստակ պատասխաններ: Մինչ օրս պարզ չէ, թե արդյոք պաշտոնապես արգելված է սիգի որսը, թե ոչ:

Հարցում - http://aarhus.am/letters_2015/012-24.11.2015-%20Grutyun%20HH%20BN.%20naxararutyun.pdf

Պատասխան http://aarhus.am/letters_2015/Gavar_patasxan_03_12.pdf

2019թ-ի հունվարի 8-ին 10 ՀԿ-ի կողմից ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին նամակ է ուղարկվել՝ խնդրելով ստուգում անցկացնել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում: Սակայն պատկան մարմնի կողմից տրված պատասխանում նշվել է սոցիալական ու բնապահպանական խնդիրները, որ ձկնորսության արգելքը միայն պատկան մարմինների կամ ուժային կառույցների լուծելու հարցը չէ, որ բնակիչների շրջանում է պետք ինտենսիվ բացատրական աշխատանքներ կատարել: Մինչդեռ հանրապետության գրեթե բոլոր սուպերմարկետներում վաճառվում է «Սևանի սիգ» մակնշմամբ ձկան պահածոներ: Եթե որսը ոչ թե սոցիալական խնդիր է լուծում, այլ սպասարկում է բիզնեսի շահերը, արդյոք կոռուպցիոն երևույթներ ի հայտ չեն գալիս, արդյոք մի քանի հոգու շահեր չեն սպասարկվում, ու էլի սովորական ձկնորսն է տուժողը, ով ընտանիքի սոցիալական խնդիրները լուծելու համար է լիճ մտել:

Տեղեկացնեմ նաև, որ ձկան ձվադրման ժամանակահատված է սահմանված դեկտեմբերի 20-ից հունվարի 20-ը, սակայն տարբեր շուկաներում մինչև փետրվարի կեսերը վաճառվող սիգից հնարավոր է ձկնկիր հանել: Ո՞վ է սահմանել ձվադրման այդ ժամկետը:

Սևանա լճում արդյունագործական ձկնորսությունը կարգավորվում է «Սևանա լճի մասին», «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքների և ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 22-ի «ՀՀ գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման մասին պայմանագրեր կնքելու կարգը հաստատելու մասին» հ.1380-Ն որոշման դրույթներով, սակայն գործնականում այդ իրավական ակտերի ոչ մի դրույթ երկար տարիներ չեն պահպանվում:

գ/ Սևանա լճում ցանցավանդակային եղանակով իշխանի պաշարների վերականգնման ծրագրի մարտահրավերները Սևանա լճի համար

Ըստ Ծրագրի՝ նախատեսվում է մինչև 2024 թ-ը մինչև 50000 տոննա ձուկ բուծել Սևանա լճում, մինչև 50 հազար տոննա արհեստական կեր լցվելով Սևանա լիճ: Այս ծրագիրը լճի ջրի որակի վրա ազդող անկանխատեսելի և անկառավարելի հետևանքներ կունենա:

Ծրագրի պիլոտային տարբերակն իրականացվել է դեռ 2013թ-ին «Էմի Ֆրույթ» ՍՊԸ-ի կողմից, Սևանա լճի Շորժայի հատվածում՝ կառուցելով ցանցավանդակային ձկնաբուծարան: Այն մեր իրականության մեջ առաջին փորձնական ծրագիրն էր, որի դրական կամ բացասական ազդեցությունը լճի էկոհամակարգի վրա մեկնարկից առաջ հստակեցված չի եղել, և նախաձեռնողների ու հանրային սեկտորի, այդ թվում անկախ փորձագետների միջև

բազում տարաձայնություններ են եղել: Այս հարցի շուրջ հանրային քննարկումները չեն տվել հստակ պատասխան կամ մասնագիտական գնահատական: Հանրային լուսմների ընթացքում ծրագիրն իրականացնող կազմակերպության և «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները հանրությանը հավաստիացրել են, որ ձկնաբուծարանի շահագործումից հետո յուրաքանչյուր օր լճում տեղադրված ժամանակակից չափիչ սարքավորումները կտան այդ հարցերի բոլոր պատասխանները: «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը Երևանի Օրհուս կենտրոնում կայացած նախագծի առաջին հասարակական լուսմների ժամանակ նույնիսկ հավաստիացրել է, որ անձամբ կհետևեն չափումների ընթացքին, և Սևանա լճի էկոհամակարգի համար վնաս ներկայացնող նույնիսկ փոքր շեղումների դեպքում կդադարեցնեն տվյալ գործունեությունը:

Չնայած պիլոտային ծրագրին հատկացված ժամկետը վաղուց ավարտվել է, սակայն վերոնշյալ տվյալներն առ այսօր չեն հանրայնացվել: Ավելին, նշված ծրագրի իրականացման պայմանագրի ժամկետը երկարացվել է:

Հաշվի առնելով հանրային հետաքրքրությունը՝ Գավառի Օրհուս կենտրոնը դիմել էր ՀՀ բնապահպանության նախարարություն՝ լճի էկոհամակարգի վրա ծրագրի ազդեցության մասին ամբողջական տեղեկատվություն ստանալու խնդրանքով: Պատասխան էր ստացվել, որ նախարարությունն իրականացրել է միայն հիդրոքիմիական մոնիթորինգ Մեծ Սևանի տարածքում, և, որ նմուշառումներն իրականացվել են 2015թ. մայիսին ու դեռևս ուսումնասիրման փուլում են: http://aarhus.am/?page_id=13604

Հաշվի առնելով հանրային սեկտորի հետաքրքրվածությունն ու վերոնշյալ տվյալների կարևորությունը Գավառի Օրհուս կենտրոնը 2015թ. հոկտեմբերի 30-ին դիմել է «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի տնօրենին՝ կրկին մոնիթորինգի արդյունքների մասին ամբողջական տեղեկատվություն ստանալու ակնկալիքով: ՀՀ օրենսդրությամբ և Օրհուսի կոնվենցիայով սահմանված ժամկետներում չստանալով պատասխան՝ կենտրոնի համակարգողը կրկնակի հարցում է արել ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ի վերջո պահանջվող տեղեկատվությունն ստանալու ակնկալիքով: http://aarhus.am/letters_2015/N001-01.02.2016-Grutyun-krknaki-%20Sevan%20AP%20tnorenin.pdf

Հարցում է արվել նաև ՀՀ բնապահպանության նախարարությանը՝ պարզելու ծրագրի արդյունքում լճում տեղի ունեցած փոփոխությունների ու ազդեցությունների մասին: Նախարարությունից մեկ ամիս պահանջվեց՝ հասկանալու, որ մեզ պետք է ուղղորդի ծրագիրն իրականացնող կազմակերպություն: Իսկ ծրագիրն իրականացնող *կազմակերպությունն այդպես էլ չտրամադրեց վերջնական եզրակացությունը:*

Հարցում http://aarhus.am/letters_2015/Gavar_harcum_05_06.pdf

Պատասխան 1. http://aarhus.am/letters_2015/Gavar_patasxan_05_06_patasxan1.pdf,

2. http://aarhus.am/letters_2015/Gavar_patasxan_05_06_1.pdf

Առանց պիլոտային ծրագրի ազդեցությունը գնահատելու՝ «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ»-ին տրվեց նոր թույլտվություն այս անգամ Կարճադրյուրի տարածքում, լճի հենց կենտրոնում, ունենալ ցանցավանդակային տնտեսություն: Մասնակցելով ծրագրի ՇՄԱԳ-ի հանրային լուսմներին՝ Գավառի Օրհուս կենտրոնի կողմից տրվել է առաջարկություն ՀՀ բնապահպանության նախարարին http://aarhus.am/letters_2015/Grutyun_Gavar_22_05.pdf, սակայն այն թղթի վրա մնաց, չնայած որ ծրագրի նախնական հանրային լուսմների ընթացքում կրկին իրականացնողներն ու ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչը հավաստիացրեցին, որ պլանավորված է ծրագրով բնապահպանական մոնիթորինգ, այն

իրականացնելու նպատակով ստեղծվել է տեղական մասնագիտացված կազմակերպություններից և փորձագետներից բաղկացած անկախ գիտական մոնիթորինգի խորհուրդ (այսուհետ՝ Մոնիթորինգի խորհուրդ), որը կգործի Համալիր ծրագրի ողջ գործունեության ընթացքում: Գավառի Օրհուս կենտրոնի հարցմանը, թե ծրագրի ընթացքում ինչ աշխատանքներ են իրականացվել http://aarhus.am/letters_2015/N002-09.02.2016-Grutyun-Sevani%20ishxani%20pasharneri%20ver.%20himnadram.pdf, տրվել է փայլուն ապագայի ակնկալիքի մասին պատասխան՝ http://aarhus.am/letters_2015/Gavar_patasxan_09_02.pdf: Այսինքն՝ կրկին չկան տվյալներ, թե այդ գործողությունները լճի էկոհամակարգի վրա ինչ ազդեցություն են գործել կամ գործելու:

Կարճադրյուրից ընկերությունը ցանցավանդակները տեղափոխել է Լճափ գյուղի տարածք, քանի որ լճի սառեցման հետևանքով ցանցավանդակները Կարճադրյուրի տարածքում պատռվել են, և ձուկն ամբողջությամբ լցվել է լիճ: Փաստորեն, լիճը դարձել է փորձատեղի, քանի որ առանց լճի էկոհամակարգի վրա ազդեցությունը գնահատելու ցանցավանդակները կարող են տեղափոխել լճի այլ տարածք ու իրականացնել բիզնես:

Կառավարության պահուստային ֆոնդից 2013-2017թթ. այս համալիր ծրագիրն իրականացնելու նպատակով հիմնադրամին որպես նվիրաբերություն հատկացվել է 9,0 միլիարդ դրամ: Մինչդեռ հանրության համար մինչ օրս հրապարակված չեն լճի ջրի որակի փոփոխության/հիդրոքիմիական, հիդրոլեռնաբանական, հիդրոմորֆոլոգիական և այլն/, տիղմի լաբորատոր քննության, լճի էկոհամակարգի վրա ազդեցության վերաբերյալ տվյալներ:

դ/ Փոքր ՀԷԿ-երի ազդեցությունը Սևանա լճի ավազանի էկոհամակարգի վրա

Սևանա լիճ թափվող գետերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանների գործունեության հետևանքով գետերը ցամաքել են, կենսաբազմազանությունը ոչնչացել է, առաջացել են ռոտզման խնդիրներ:

Օրինակ 1. Սևանա լիճ թափվող Արգիճի գետի Գայլաձոր վտակի վրա ՓՀԷԿ-ի կառուցման գործընթացն սկսվել էր առանց հանրային լսումների, հողատկացման, շինյուլտվության, ջրօգտագործման թույլտվության: Գավառի Օրհուս կենտրոնի, մարզային և հանրապետական ՀԿ-ների աջակցությամբ տարածված տեղեկատվության, կազմակերպված բազմաթիվ քննարկումների, ընդվզումների, հասարակական պայքարի արդյունքում փոքր ՀԷԿ-ի ապօրինի շինարարությունը դադարեցվեց, և Գայլաձորի հունը չփոխվեց: ՓՀԷԿ-ը կառուցող «Չանգեզուր Էքսիմս» ընկերությունը միայն տուգանվեց 400 հազար դրամով: Սակայն մինչ օրս չի վերականգնվել բնությանը հասցված վնասը, չի ապամոնտաժվել առանց թույլտվության կառուցված ՓՀԷԿ-ի պատվարը: Մինչ այժմ ոչ մեկը չի պատժվել այդ անօրինական գործողություններն իրականացնելու համար:

Օրինակ 2. «Հիդրո կորպորացիա» ՍՊԸ-ն, առանց հասարակական լսումներ անցկացնելու, առանց տեղի ազդակիր համայնքների կարծիքը հարցնելու, ունենալով ժամկետանց բնապահպանական փորձաքննության եզրակացություն /ՓՀԷԿ-ի կառուցման նախագիծը ՇՄԱԳ անցել է 2002թ-ին, սակայն կառուցումը սկսվել է 2012թ./ 12կմ երկարությամբ խողովակաշար ունեցող փոքր ՀԷԿ կառուցեց Արգիճի գետի վրա: Արգիճի գետը Սևանա լճում հանդիպող արժեքավոր, այդ թվում՝ կարմիրգրքյան և էնդեմիկ ձկնատեսակների բնակության վայրն է և ապահովում է նրանց կենսական ցիկլը: Գետի այն հատվածում, որտեղ կառուցված է ՓՀԷԿ-ի գլխամասային հանգույցը, կարող են հանդիպել կարմրախայտը, Սևանի բեղաձուկը, Սևանի կողակը, որը ոչնչացման վտանգի տակ է, գեղարքունին: ՓՀԷԿ-ի շահագործման արդյունքում ձկների բնական վերարտադրությունը խիստ նվազել է:

Եթե Գայլաձորի դեպքում հասարակական ընդվզումների արդյունքում հնարավոր եղավ ապօրինի գործընթացները կասեցնել, ապա Արգիճիի դեպքում նույնը չենք կարող ասել, քանի որ բնակիչները վախեցած էին, նախորդ գործընթացներին բնակիչներին՝ նույնիսկ կանանց, ուստի կանություն կանչելու, հարցաքննելու օրինակն այժմ առաջ ունենալով:

«Արգիճի» ՓՇԷԿ-ը փորձարկման ժամանակ 2 անգամ վթարվեցին խողովակները, ինչի արդյունքում ողողվեց խողովակաշարին հարակից բնակիչների ցանքերն ու ոչնչացրեց սպասվող բերքը: Տուժած բնակիչների մի մասը դեռևս համարժեք փոխհատուցում չի ստացել:

«Արգիճի» ՓՇԷԿ-ը նախատեսված էր կառուցել ու գործարկել Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմի ներքո, որի կիրառման դեպքում տարվա սակավաջուր ամիսներին ՓՇԷԿ-ը չէր գործելու: Այդ Նախագիծը բազմիցս քննարկվել է Գավառի Օրհուս կենտրոնի կողմից կազմակերպված քննարկումներում, որոնց ընթացքում ներկայացվել են տեխնիկական ցուցանիշեր, ըստ որոնց նվազագույն էկոլոգիական թողքը սահմանված է եղել 1000 լիտր/վայրկյան (այսինքն, օրենսդրությամբ նախատեսվածից ավելի): Նաև տրվել էին հավաստումներ, որ գետի հունը չի ձևափոխվելու ու ջրընդունիչ հանգույցում ջրի հունը խախտող պատվար չի դրվելու: Սակայն հետագայում «Արգիճի» ՓՇԷԿ-ը ինչ-ինչ պատճառներով կառուցվեց սովորական ընթացակարգով, ջրօգտագործման թույլտվությամբ թույլ տրվեց ջրառ կատարել նաև սակավաջուր ամիսներին ու ինչպես Հայաստանի ՀԷԿ-երի 99%-ում, այստեղ նույնպես կառուցվեց պատվար: Չնայած ըստ ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածի՝ «Ջրօգտագործման թույլտվությունն իրավունք չի վերապահում փոփոխել, ձևափոխել կամ այլ կերպ օգտագործել ջրային ռեսուրսի հունը կամ ափերը, եթե դա չի սահմանում որպես ջրօգտագործման թույլտվության առանձին պայման: Ջրային ռեսուրսի հունը կամ ափերը փոփոխելու, ձևափոխելու կամ այլ կերպ օգտագործելու իրավունքը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին»:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունում նշված չէ, որ «Արգիճի» ՓՇԷԿ-ը սակավաջուր ամիսներին չի գործելու:

Այսպիսով, «Արգիճի» ՓՇԷԿ-ը Հայաստանի բոլոր ՓՇԷԿ-երի նման, կառուցվել է օրենքի խախտումով: Կից մի քանի հարցումներ ու պատասխաններ, որոնք արվել են Գավառի Օրհուս կենտրոնի կողմից:

Հարցում-<http://aarhus.am/letters/010%20Grutyun%20HH%20bn%20%20naxararutyan.pdf>

Պատասխան-[http://aarhus.am/letters/Grutyun%20patasxan%20010-](http://aarhus.am/letters/Grutyun%20patasxan%20010-Argichii%20teschakan%20stugumneri%20masin%20HH%20%20bnut%20naxic.pdf)

[Argichii%20teschakan%20stugumneri%20masin%20HH%20%20bnut%20naxic.pdf](http://aarhus.am/letters/Grutyun%20patasxan%20010-Argichii%20teschakan%20stugumneri%20masin%20HH%20%20bnut%20naxic.pdf)

Հարցում-<http://aarhus.am/letters/011%20Grutyun%20V.%20Getasheni%20hamaynqapetin.pdf>

Պատասխան-

<http://aarhus.am/letters/011%20Grutyun%20patasxan%20V.%20Getasheni%20hamaynqapetic1.pdf>

Հարցում-http://aarhus.am/letters/Bnutnax_Gavar_15_05.pdf

Պատասխան-http://aarhus.am/letters/30_05_gavar_bnutnax.pdf

Հարցում-http://aarhus.am/letters/Artakarg_Gavar_15_05_1.pdf

Պատասխան-http://aarhus.am/letters/Gavar_artakarg_ir_pat_26_05_1.pdf

ե/ Ափամերձ տարածքները չեն նախապատրաստվել լճի մակարդակի բարձրացման համար

2002 թվականից սկսած Սևանա լճի մակարդակը ձեռնարկված միջոցառումների արդյունքում բարձրացել է մոտ 3,5 մետրով: Չնայած պատկան մարմինները շատ լավ գիտեին թե ինչ խնդիրներ կարող են առաջանալ լճի մակարդակի բարձրացման արդյունքում, ինչ տարածքներ կարող են հայտնվել ջրի տակ, բայց լճի ջրածածկման ենթակա ափերը

Ժամանակին չմաքվեցին և չնախապատրաստվեցին ջրածածկմանը: Ջրածածկ են եղել հազարավոր հեկտար ափամերձ անտառներ և թփուտներ՝ դառնալով Սևանա լճի էկոհամակարգի վրա ազդող բացասական էական գործոն:

Պետական բյուջեից և միջազգային կազմակերպություններից ստացված հսկայական գումարներով փորձ է արվել խնդրին լուծում տալ: ՀՀ կառավարության 2010թ.-ի հ.886-Ն որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից / լուծարվել է 13.01.2011թ.-ի ՀՀ կառավարության N8-N որոշմամբ/ գնվել է Վոթերմաստեր կլասիկ 3 ֆրեզերային հողագործ էքսկավատորը, որը նախատեսված է ջրածածկ ծառերի մաքրման համար: Այդ աշխատանքների իրականացման համար էքսկավատորը 2015թ.-ին տրվել էր կապալառու կազմակերպության՝ ՃՇՇԶ ԲԲԸ-ին, աշխատանքների իրականացման նպատակով, ինչի համար ծախսվել է շուրջ 1 միլիարդ դրամ գումար, որից 25 միլիոնը ՄԱԶԾ համաֆինանսավորումն է եղել, սակայն արդյունքը տեսանելի չէ, ինչի վկայությունը ջրածածկ անտառների ու թփուտների առկայությունն է:

Մաքրված տարածքների փայտանյութը ամեն տարի հանձնվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին, որը հավաստում է, որ փայտանյութը բաժանել են կարիքավոր ընտանիքներին: Այս գործընթացը թափանցիկ ու հրապարակային չէ:

Այս թեմայով Գավառի Օրհուս կենտրոնում տեղի են ունեցել քննարկումներ: Ուղարկվել են հարցումներ, թե արդյոք իրականացվել է մոնիտորինգ՝ պարզելու, թե ինչքանով է արդարացված այդ արժեքի էքսկավատորի գնումն ու օգտագործումը մեր երկրում, ովքեր են տնօրինում այդ սարքը, ինչ պայմաններով և այլն: Այդ պատասխանում, որը դեռ 2015թ.-ին էր, մեզ տեղեկացրեցին, որ ջրածածկված ընդհանուր տարածքը կազմում է 3850 հա, որից 1830-ն արդեն մաքրված է, դեռ 2000 և ավելի հեկտար տարածք է պլանավորվում մաքրել մյուս տարիներին: ՀՀ բնապահպանության նախարարը 28.09.2018թ. ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի խորհրդարանական լուսնների ժամանակ իր ելույթում նշեց, որ իրենց որոշակի հետազոտությունների արդյունքում նախնական պարզվել է, որ եղել են տարածքների համընկումներ 2011, 2014, 2016 և գալիք տարիների մաքրումների համար: Նախարարը հավաստիացրեց, որ իրենց գործընկերների հետ Կադաստրի և անտառային պետական մոնիտորինգի կենտրոնի հետ կպարզեն տեղեկատվության հավաստիությունը, և եթե վերջնական հաստավի, իրենք պատրաստվում են լուծել պայմանագրերը և այսուհետ մաքրումը պլանավորեն ըստ պլանավորվող ջրածածկման: Պատրաստվում ենք հարցում ուղարկել, ճշտելու հարցերը: Ու նաև պետք է ճշտենք՝ արդյոք մենակ պայմանագրերը լուծելով հարցին հնարավոր է լուծում տալ, իսկ ովքեր են կրելու պատասխանատվություն, այդքան տարի պետական բյուջեի հաշվի նույն տարածքները մաքրելու համար:

Ջրի մակարդակի բարձրացման արդյունքում ջրի տակ են մնում անտառային տարածքներ և ապօրինի կառույցներ, աղտոտվում է Սևանա լիճը, վտանգվում է ջրի որակը, ձկնատեսակները և առաջանում է ճահճացման վտանգ:

Կից հարցումը և պատասխանը

http://aarhus.am/letters_2015/004-16.04.2015%20-

[%20HH%20BN%20Votermasteri%20i%20het%20kapvac.pdf](http://aarhus.am/letters_2015/004-16.04.2015%20-%20HH%20BN%20Votermasteri%20i%20het%20kapvac.pdf)

http://aarhus.am/letters_2015/Gavar_patasxan_21_04.pdf

զ/ Գեղարքունիքի մարզում գործող 29 հանքերի, մասնավորապես Սոթքի ոսկու հանքավայրի անմիջական բացասական ազդեցությունը Սևանա լճի վրա, ինչպես նաև նոր հանքավայրերի հետախուզությունը և Ամուլսարի ոսկու հանքի հավանական շահագործումը, որտեղ ձևավորվող Արփա և Որոտան գետերի ջրերը թունելով տեղափոխվում են Սևանա լիճ:

2012 թ. Գեղարքունիքի մարզի Սոթք համայնքը հավանություն տվեց Սոտքի ոսկու բաց հանքի վերազինման ծրագրին: Համայնքը Սոթքի հանքը շահագործող «GeoProMining Gold» ընկերությանը 1047 հա հող է տվել վարձակալության:

Գյուղը հանքի ազդեցության անմիջական կրողն է: Ճիշտ է՝ Սոթքի ոսկու հանքում վերամշակման գործարան կառուցելու հարցը վերջնականապես օրակարգից հանվել է, սակայն հանքի վերազինման անվան տակ հանքում կառուցված ջարդիչ տեսակավորող համալիրն իր տեսակի մեջ փոքրիկ գործարան է, որը մանրացնում է հանքաքարը, և որի արդյունքում հենց տեղում ոչ պետքական, դատարկ ապարները էլ չեն տեղափոխվում Արարատ, այլ լցվում նույնիսկ ճամփեզրերին: Գյուղի տարածքում են լցվում Սոթքի հանքավայրի շահագործման արդյունքում առաջացած դատարկ ապարները և լցակույտերը: Տեղի մթնոլորտային օդն աղտոտված է հանքի և լցակույտերի տարածքից բարձրացող թունավոր փոշով: Գյուղի միջով է հոսում հանքի տարածքից դուրս եկող Սոթք գետը՝ աղտոտված ծանր մետաղներով և տոքսիկ նյութերով: Այս ջուրն օգտագործվում է ոռոգման նպատակով: 2016թ. Սոթք համայնքը ընկերության կողմից վարձակալված հողերի դիմաց 68 միլիոն դրամ էր ստացել: Իսկ մի ամիս առաջ Ամերիկյան համալսարանի Հակոբյան կենտրոնի կողմից կազմակերպված ԱՃԹՆ դասընթացի ժամանակ Վարդենիս համայնքի ղեկավարը ներկաներին խնդրեց օգնել իրենց համայնքին, որպեսզի «Գեո Պրո Մայնինգ Գոլդ» ընկերությունը դադարեցնի դատարկ ապարները լցնել Վարդենիս համայնքի վարչական տարածքում և շարունակի չվճարել դրա համար:

Ոլորտի մասնագետների կարծիքով՝ Սոթքի ոսկու հանքավայրի շահագործումն ամբողջովին չի համապատասխանում բնապահպանական պահանջներին, Սոթք և Մասրիկ գետակներն աղտոտված են. ծանր մետաղների պարունակությունը բարձր է նորմայից, իսկ այդ գետերը Սևանա լիճը սնուցող ջրառատ գետերից են: Այստեղ կրկին խախտվել է ՀՀ Սևանա լճի մասին օրենքը:

Հարցում- http://aarhus.am/letters_2015/N003-15.03.2016-Grutyun_HH%20bn.%20naxararin%20Sotqi%20het%20kapvac.pdf

Պատասխան http://aarhus.am/letters_2015/Patasxan%20N003-i%2015.03.2016.pdf

Է/ Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով ջրի տաքացման, ջրիմուռների բազմացման արդյունքում առաջ է եկել քաղցրահամ լճի ճահճացման վտանգը:

Խորհրդային տարիներից էներգետիկ նպատակներով Սևանա լճի մակարդակի արհեստական իջեցման հետևանքով տեղի են ունեցել լճի մորֆոմերֆիկ, ջրաֆիզիկական, ջրաքիմիական և ջրակենսաբանական ցուցանիշերի էական փոփոխություններ: Մասնավորապես՝

- բարձրացել են ջրի (2-3°C-ով) և հատակի միջին ջերմաստիճանները
- զգալիորեն կրճատվել է լճի հիպոլիմնիոնի (մերձհատակային շերտ) ծավալը, իսկ Մեծ Սևանում այն համարյա անհայտացել է
- նվազել է ջրի միջին լուսաթափանցելիությունը (արևային ճառագայթների թափանցելիության աստիճանը/)
- նվազել է ջրում լուծված թթվածնի կոնցենտրացիան՝ հատկապես մերձհատակային շերտում

- նվազել է ֆոսֆորի կոնցենտրացիան, աճել են ազոտի, օրգանական ածխածնի կոնցենտրացիաները (ավազանում շեղվել է տարրերի հավասարակշռությունը)
- Սևանա լճի էկոհամակարգի բնականոն վիճակի խաթարման արդյունքում տեղի են ունեցել հիդրոկենսաբանական ցուցանիշների փոփոխություններ.
- Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով ափային գծի և լճի հայելու մակերեսի կրճատումները հանգեցրել են մի շարք էնդեմիկ և չվող թռչունների տեսակների կրճատմանը, թռչունների տեսակային կազմի փոփոխության:

Այս ամենը բավարար չհամարելով՝ սկսած 2008 թ-ից /2008թ., 2012թ., 2014թ., 2017թ., 2018թ./ Ջրային պետական կոմիտեն դիմել է Կառավարությանը սահմանված 170մլն. խմ –ից ավելի լճից ջրառ իրականացնելու և «Սևանա լճի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու խնդրանքով՝ ջրի դեֆիցիտը պատճառաբանելով գյուղատնտեսական կարիքների համար: Այդ ջրբացթողումներն իրականացնելուց և ոչ մի տարի լուրջ հիմնավորումներ չեն տրվել և ոչ մի տարի երբևէ չեն իրականացվել լուրջ ուսումնասիրություններ, թե ինչ ազդեցություն կունենա լճի էկոհամակարգի վրա յուրաքանչյուր լրացուցիչ մեկ լիտր ջրառը: 2017թ-ին նույնիսկ Արարատյան դաշտի գյուղացիների մասին ոչինչ չասվեց: ԱԺ-ի նիստի ժամանակ պատգամավորները հայտարարեցին, որ այդպես է պետք, ուրեմն պետք է կողմ քվեարկել: Բայց այս անգամ հիմնավորեցին, որ Սևան-Հրազդան կասկադի կողմից արտադրված էլեկտրաէներգիայից շահույթը կուղղվի Սևանա լճի պահպանությանն ուղղված ծրագրերի, գումարը կպահվի արտաբյուջետային հաշվում, որտեղից էլ կարվի ծախսերը:

Սևանա լճից սնվում է Սևան-Հրազդան հիդրոկասկադը, որը բաղկացած է 7 կայանից՝ 561 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: Կասկադը շահագործում է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն: Հենց այս ընկերությունն է կառավարում Սևանա լճից բաց թողնվող ջրի փականը:

Իրականում խնդիրը ոչ թե ջրի դեֆիցիտն է, այլ ջրի բաշխումը, որը կրում է մեծ կոռուպցիոն ոիսկեր: Ջրերի կառավարման ոլորտում կոռուպցիայի վերացման դեպքում հնարավոր կլինեն Արարատյան դաշտի ռոռգման այլընտրանքային տարբերակներ՝ առանց Սևանա լճից հավելյալ ջուր օգտագործելու:

Կառավարությունը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ

- Համաձայն ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի գիտական հաշվարկների՝ յուրաքանչյուր 12.5 մլն խմ բացթողումը լճի մակարդակը կիջեցնի 1սմ-ով:
- 2018թ-ին հավելյալ ջրբացթողումների հետևանքով և բարձր ջերմաստիճանի պայմաններում Սևանա լճի գրեթե ողջ հայելին ծաղկեց կապտականաչ ջրիմուռներով, լճի թափանցելիությունը 14 մետրից նվազեց մինչև 2 մետր, լճում գրանցվեց նորմայից բարձր ջերմաստիճան, լճում ակտիվացան ճահճացման գործընթացները:

Դրա հետ մեկտեղ պաշտոնապես հավուր պատշաճի չի քննարկվում ջրամբարների չլցվելու պատճառները, որով հիմնավորվում է լճից լրացուցիչ ջրառների անհրաժեշտությունը: Լրացուցիչ ջրբացթողումն արվում է նույնիսկ այն պարագայում, երբ ասենք օրինակ 2001 թվականին Հայաստանի կառավարությունը Համաշխարհային բանկից վերցրել է 30.8 միլիոն դոլլարի վարկ, որով պետք է Արաքսից ջուրն ուղղվեր Արարատյան դաշտի ռոռգման խնդիրների լուծման համար: Մինչ օրս հարցը լուծված չէ, իսկ 30.8 միլիոնի ճակատագիրն՝ անհայտ: Իսկ եթե, իրոք, այդ ծրագիրն ավարտված է հաջողությամբ, ապա ինչո՞ւ ենք ամեն տարի ջրապակասի կարիքները Սևանից ջուր վերցնելու հաշվին անում:

06.05.2019թ-ի դրությամբ Սևանա լճի հաշվեկշիռը 1900,60 է, նախորդ տարվա 1900,64-ի համեմատ, այսինքն -4 սմ բացասական հաշվեկշիռ ունի լիճը: «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով արգելված է տարին փակել բացասական հաշվեկշռով, բայց արդեն 3-րդ տարին է, լիճն ունի բացասական հաշվեկշիռ: Մինչ օրս պատասխանատվություն չեն կրել այն պաշտոնյաները, ովքեր տվել են լրացուցիչ ջրառի համաձայնություն և խոստացել, որ իրենց հաշվարկներով լիճը բացասական հաշվեկշիռ չի ունենա:

ը/ Աղբի ու աղբավայրերի խնդիրը

Լճի էկոհամակարգի և ջրերի որակի վրա բացասական ներգործություն ունեն լճի ավազանի բնակավայրերի կենցաղային աղբի և թափոնների անկառավարելի արտանետումները: Լճի ավազանում բացակայում են կառավարվող կենտրոնացված աղբավայրերը: Այդ պատճառով ավազանում առաջացել են աղբի կուտակման բազմաթիվ վայրեր և ցրված աղբակույտեր: Բնակչությունը և տնտեսվարողները աղբը թափում են անկազմակերպ, հիմնականում գետերի ու առուների հունների մեջ: Գետերի ջրերի և տեղումներից առաջացող հոսքաջրերի միջոցով աղբի մնացորդները ափամերձ գոտիներից լվացվում են դեպի լիճ և վերջիվերջո հայտնվում են լճի ջրերում: Հաճախակի են նաև աղբի և թափոնների ուղղակի արտանետումները լճի մեջ:

Կառավարության 2011թ-ի Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագծի համաձայն՝ Գեղարքունիքի մարզի 92 համայնքից միայն 27-ն ունի աղբավայր, որից 5-ը գտնվում է Սևանի, 5-ը Գավառի, 12-ը Մարտունու, 2-ը Վարդենիսի, 3-ը Ճամբարակի տարածաշրջանում: Վերոնշյալ փաստաթղթի համաձայն՝ գործող ու չգործող աղբավայրերը չեն համապատասխանում սանիտարական նորմերին, բաց են, աղբը չի հողածածկվում:

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի ներկայացրած «Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագիծ» ծրագրային փաստաթղթին 2011թ-ին տրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական ԲՓ-15 դրական եզրակացությունը, որն այդպես էլ թղթի վրա է մնացել:

Ճիշտ է՝ համայնքներից, բնակավայրերից աղբը պարտաճանաչ հավաքվում է, սակայն այդ աղբի վերջնական հանգրվանը օրենքի շրջանակներում չի արվում, քանի որ չունենք և ոչ մի աղբավայր, որը համապատասխանում է բոլոր սանիտարական նորմերին և շահագործվում է օրենքով:

Դրա հետ մեկտեղ լողասեզոնի բացմանը զուգահեռ ավելանում է Սևանա լիճ թափվող աղբի քանակը, քանի որ հանգստացողների 90 տոկոսն իր հետևից աղբը չի հավաքում: Գավառի Օրհուս կենտրոնը բազմիցս այս հարցը բարձրացրել է մարզային իշխանությունների առաջ, ովքեր տվել են հանձնարարական համայնքների տարածքում աղբակույտերի հավաքման և հեռացման, նաև հարցին վերջնական լուծում տալու համար, սակայն ոչ օրինական գործող աղբավայրերի, քաղաքացիների ոչ սրտացավ վերաբերմունքի պայմաններում հնարավոր չէ հարցին լուծում տալ:

թ/ Սևան թափվող առափնյա 43 համայնքների, որից 3-ը՝ քաղաքների կոյուղաջրերի հոսքը լիճ:

Լճի ջրերի որակի վրա բացասական ներգործություն ունեն նաև լճի ավազանի բնակավայրերի կոմունալ-կենցաղային կեղտաջրերի անարգել հոսքը դեպի լիճ:

Սևանի ջրահավաք ավազանում կառուցվել են մեխանիկական մաքրման կայաններ՝ Գավառ, Մարտունի, Վարդենիս, Ջերմուկ քաղաքներում, սակայն այդ կայանները չեն ծառայում նպատակին: Օրինակ, Վարդենիսի կայանի հզորությունը չի բավարարում ամբողջ գետի

ջուրը կայանով անցկացնելու համար, իսկ տեղացիների պատմելով գետն, այսպես ասած, կիսել են, ու ոչ ամբողջական է մտնում կայան, որ կարողանա հասցնել մաքրում անել:

Այդ կայանների նախագծերում ժամանակին նույնիսկ նշված չէր, թե այդ թաց աղբը որտեղ են թաղելու, այսինքն Սևանը շարունակվում է աղտոտվել լիճը գոտևորող համայնքների կողմից:

Կոյուղաջրեր են թափվում Սևանա լիճ նաև լիճը գոտևորող հանգստյան տներից, որոնց պայմանագրերում, ճիշտ է, վերջերս ավելացվել է, որ պարտավոր են անպայման ունենալ մաքրման կայաններ, սակայն այն միայն թղթի վրա է մնացել:

Անհրաժեշտ է, իհարկե, իրականացնել մոնիտորինգ՝ պարզելու իրական պատկերը:

Վերոնշյալ բոլոր հիմնախնդիրների պարբերաբար լուծման համար պետական բյուջեից, միջազգային կառույցների աջակցությամբ ծախսվել են հսկայական միջոցներ: Սակայն ինչպես տեսնում ենք՝ անարդյունք, և Սևանա լճի բնապահպանական հիմնախնդիրները մնում են չլուծված:

Բերված փաստերից կարելի է կատարել հետևյալ հետևությունները՝ Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական և ազգային առաջնահերթություն համարվող Սևանա լիճն ակնհայտորեն ենթարկվել և շարունակում է ենթարկվել էական վտանգների, որոնք կարող են հանգեցնել լճի հետագա գոյության, նրա էկոհամակարգերի, քաղցրահամ ջրի որակի և ռազմավարական պաշարների կորստի, կենսաբազմազանության խաթարման, ազգաբնակչության հանգստի կազմակերպման և երկրի զբոսաշրջության հնարավորությունների կրճատման և դրանց անդարձելի կորուստների: Ի դեմս լճի ձկնային պաշարների և Արարատյան հարթավայրի գյուղատնտեսական մթերքների կրճատման՝ վտանգված են նաև ռազմավարական նշանակության սննդամթերքի պաշարները:

Ելնելով վերոնշյալից՝ դիմում եմ Բնապահպանական հանրային դատարանին՝ խնդրելով պատասխանատվության ենթարկել՝

- ՀՀ նախկին կառավարությանը, որի ընդունած որոշումները հակասել են «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթների:
- ՀՀ բնապահպանության նախարարությանը, որը բավարար չափով չի իրականացրել ջրածածկ տարածքների մաքրում և դրանով իսկ նպաստել է Սևանա լճի աղտոտմանը, ոչ նպատակային է ծախսել հատկացված պետական բյուջետային միջոցները, չի կանխել «Սևան» ազգային պարկի՝ լճի ափամերձ տարածքների ապօրինի կառուցապատումը, չի ապահովել Սևանա լճի ձկնային պաշարների վերականգնումը, որի համար տարեկան հատկացվել են պետական միջոցներ, չի կանխարգելել Սևանա լճից կատարվող ապօրինի ձկնագողությունը, Սևանա լիճ թափվող գետերի վրա թույլատրել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը, խախտելով Սևանա լճի մասին, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին» և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքների դրույթները, «Լանդշաֆտների պահպանության մասին» եվրոպական կոնվենցիան, «Կենսաբազմազանության պահպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, Օրհուսի Կոնվենցիան և այլ օրենքներ:
- ՀՀ ջրային կոմիտեին, որը ձգձգել է 2010-2017թթ. նախատեսված «Արփա-Սևան» թունելի առավել վթարային հատվածների հիմնանորոգման ծրագրի կատարման ժամկետները, ջրակորուստների կանխարգելման միջոցառումներ չի իրականացրել

Արարատյան դաշտի գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման նպատակով Սևանա լճից ջրառի ծավալների նվազեցման ուղղությամբ:

- «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի նախկին և ներկա տնօրինություններին, որը Պարկի ռեկրեացիոն և տնտեսական գոտիներում չի բացառել կեղտաջրեր առաջացնող օբյեկտների շահագործումն առանց կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման, չի ապահովել Սևանի իշխան, Սևանի բեղլու, Սևանի կողակ էնդեմիկ ձկնատեսակների բնական զարգացումն ու ձվադրումն ապահովող ուղիների պահպանության ռեժիմի կատարումը, Ազգային պարկի տարածքում չի կանխարգելել ապօրինի շինությունների կառուցումը, պատշաճ հսկողություն չի սահմանել ապօրինի ձկնորսության դեմ, հսկողություն չի սահմանել լողափի և բուֆերային գոտիներում գտնվող տարածքների համար կնքված վարձակալական պայմանագրային պարտականությունների կատարման նկատմամբ:

Խնդրում եմ հայցն ընդունել և քննել ամենայն պատասխանատվությամբ, քանի որ եթե կորցնենք Սևանը, կորցնելու ենք նաև երկիրը:

Օգտագործվել են կից կայքերից վերցված տեղեկատվությունները՝

www.ecolur.org

<http://sevanlake.am/problems/>

3 192 527,9 մլն պետական միջոցներ են ծախսվել, 105 661 մլն այլ աղբյուրներից մարզում կատարված ծրագրեր

[http://aarhus.am/letters/006%20-](http://aarhus.am/letters/006%20-%20HH%20Bnaphanutyanyan%20naxararin%20Sevani%20het%20kapvac%20cragreri%20masin.pdf)

[%20HH%20Bnaphanutyanyan%20naxararin%20Sevani%20het%20kapvac%20cragreri%20masin.pdf](http://aarhus.am/letters/Gavar_patasxan_16_06.pdf)

պատասխան՝ http://aarhus.am/letters/Gavar_patasxan_16_06.pdf

Հետզոտություն՝ դիմումատուի կողմից նշված www.aarhus.am կայքի բոլոր հղումները՝ Գավառի Օրհուս կենտրոնի և պետական մարմինների միջև նամակագրության վերաբերյալ, այժմ անհասանելի են, քանի որ կայքը ներկայումս չի գործում:

3. Տուժողների վկայությունները.

- **Անահիտ Գևորգյան՝ «Մարտունու կանանց խորհուրդ» ՀԿ նախագահ.**

Ես ներկայանում եմ որպես Սևանի ափին ապրող բնակիչ և այս ամենն իր վրա զգացող: Ժողովրդական իմաստությունն ասում է՝ վերքը տիրոջն է ցավ տալիս: Նստածներից շատերը մասնակցում էին հանրային լսմանը Ազգային ժողովում: Ես նախկին նախարար Արամ Հարությունյանին ասացի՝ Սևանը ձեզ հետաքրքրում է այնքանով, որքան ձեր աթոռը: Եվ հիմա նույն կարծիքին եմ: Ղեկավարները Սևանով հետաքրքրվում են այնքանով, ինչքանով իրենց աթոռով: Այստեղ նստած հասարակական կազմակերպություններն ավելի սրտացավ են Սևանին, քան՝ պետական կառույցները: Տեղական ժամանակ Սևանն իր ափամերձ տարածքներով եղել է մի գառան դմակ, դանակը տվել են իշխանավորների ձեռքը: Ով ինչքան կարողացել է, կտրել է, տարել է: Անցեք Սևանի ափով՝ պատեր կառուցած Սևանի մոտ, Ծովագարդի մոտ, պատը շարել են, մտել ջրի մեջ: Ամբողջը ցանց է: Եթե դուք փորձեք Սևանից Գավառ գնալ, չեք կարող մոտենալ լճին, ձեր ոտքը թրջել: Ամբողջը ցանցապատել են, վարձակալել, հիդրոէլեկտրակայաններ կառուցել:

Ինչու՞ են կառուցել հիդրոէլեկտրակայաններ Սևանը սնուցող գետերի վրա, ինչի՞ համար: Հիմա թե 8 միլիոն կտա, թե 2 միլիոն կտա այդ համայնքի բնակչին, ի՞նչն է փոխվում: Ջրի մեջ կենդանիները զարգանալո՞ւ են: Մարտունու ՀԷԿ-ը կառուցեցին, մենք չիմացանք: Գետի մեջ գորտի և ձկան փշեր ու ոսկորներ էր: Իսկ հիմա գորտ էլ չկա, կենդանական նշույլ չկա այդ գետում:

Արգիճի գետը համարվում է իշխանի ձվադրման հիմնական վայրը: Ամբողջ ջրերը լցվել են խողովակների մեջ, ամայացել է այդ տարածքը, հարգելի հանրային դատարան: Ո՞վ է վերականգնելու: Եթե տան 10, 50 միլիոն դրամ համայնքին, դրանով բնությունը վերականգնո՞ւմ են: Դրանով մենք այն հարվածը, որ հասցրել ենք բնությանը, վերականգնո՞ւմ ենք: Ո՞չ: ՓՀԷԿ-ի կառուցման ժամանակ բազմաթիվ ընտանիքների սեփականության իրավունքն է խախտվել: Մարդու տնամերձ հողը վերցրել են, սկզբից ասել են փոխհատուցում կտան, հետո մարդուն քարշ են տվել դատարան, սերվիտուտով հանրային գերակա շահի տակ մարդու տնամերձն առել են ձեռքից ու որևէ փոխհատուցում չեն տվել:

Ինչի համար երկարեց Արփա-Սևան երկրորդ թունելի շինարարությունը, որովհետև այն Արփայի ջուրը, որ պիտի լցվեր թունելի մեջ, հասներ Սևան, պտտվում, լցվում էր Եղեգիս գետ և պտտեցնում էր ՓՀԷԿ-երը: Էլ ինչի համար պիտի թունելն աշխատեր, որ այդ ջուրը զար, հասներ Սևան: Մյուս կողմից էլ եթե զար, հասներ Սևան, իրենց տներն էին մնում ջրի տակ, իրենց ամառանոցները: Այսինքն՝ մի գնդակով երկու նապաստակ էին բռնում: Ամբողջ Արփայի ջրերն այդքան ժամանակ լցվել են Եղեգիս, և գնացել են ՀԷԿ-եր պտտեցրել: Որովհետև և՛ Արփա-Սևանի տերը, և՛ շինարարը, և՛ վերահսկողը նույն մարդն է:

Ներկա իշխանությունների օրոք վարչապետին տարան, ցույց տվեցին, որ ինչ հրաշալի բան է ցանցավանդակային տնտեսությունը: Հորմոնը լցնում են լիճը, մեծ չափերի սիգ ունենք և ուրախանում ենք, որ ցանցային ձկնաբուծություն ունենք Սևանա լճում: Դա Սևանի ամենամեծ ողբերգությունն է, ցանցային ձկնաբուծությունը Սևանա լիճը դարձրել է ձկնորսարան:

Երբ ասացին, որ Սևանի հարակից ափերը պետք է մաքրվեն, այո, սկսեցին այդ աշխատանքները: Բայց խոշոր, առողջ, բոլոր տիպի ծառերը կտրեցին, տարան: Ջրի մեջ ոչ ծառի արմատ, ոչ ճյուղ չհանեցին, ոչ ճահիճը մաքրեցին, բայց կտրեցին բոլոր այն ծառերը, որոնք պիտանի էին օգտագործման համար:

Մեր տարածաշրջանը բարձր լեռնային է, մենք ութ ամիս վառում ենք: Հոկտեմբերից առ այսօր ջեռուցում ենք: Բնակիչն ապրում է այդ ջրի ու այդ մի կտոր ձկան հաշվին: Ինչու՞ մեր հաշվին Արարատյան հարթավայրը դարձնում են ձկնաբուծարան, այստեղի ջուրը տանում են, այնտեղ ձուկ են աճեցնում: Ձուկը ջրում է աճում: Եթե այնտեղ ջուր չկա, ինչո՞ւ են ձուկ աճեցնում:

4. Փորձագետների վկայությունները.

• Էվելինա Ղուկասյան՝ ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության դեկավար.

Սևանա լճում կենսառեսուրսները չեն պահպանվում: Մեր ինստիտուտն ամեն տարի իր գիտական հիմնավորումներն է ներկայացնում Բնապահպանության նախարարություն: Բայց չի եղել դեռ մի տարի, որ մենք մեր առաջարկների դիմաց որևէ բան տեսնենք:

Բնապահպանության նախարարությունը մրցույթ է հայտարարում պաշարների գնահատման նպատակով: Մեզ կանչում, ասում են՝ գիտեք, ձկնորսներն ասում են՝ լճում ավելի շատ ձուկ կա, քան դուք եք ներակայացրել: Բնականաբար, լճում ավելի շատ ձուկ կա, և պաշար գնահատել չի նշանակում ամբողջովին մաքրել լիճը ձկից: Մենք գնահատում ենք, թույլ ենք տալիս այնքան, որքան պետք է հանել, որպեսզի այդ պաշարը վերականգնվի:

2019 թ. Սևանա լճի պաշարների գնահատման այդ տարեկան ծրագրում ներգրավված է պաշարների, կենսատեսուրսների գնահատում, սակայն այս տարի Սևանա լճում խեցգետնի և ձկների պաշարների հաշվառման և օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանման համար մրցույթ չհայտարարվեց: Դա նշանակում է, որ մյուս տարի մենք ընդհանրապես չենք ունենալու ձկների թույլատրելի որսաչափ, չենք ունենալու խեցգետնի թույլատրելի որսաչափ: Երբ մենք հետաքրքրվեցինք Բնապահպանության նախարարությունից, թե ինչու մրցույթ չի հայտարարվել, ասացին՝ դուք ամեն անգամ նշում եք, որ այդ գումարը բավական չէ, որպեսզի լիարժեք հետազոտություններ կատարեք: 7,5 միլիոն դրամը շատ քիչ է, որպեսզի հետազոտվի Սևանա լճի ամբողջ ջրհավաք ավազանը, ինչպես նաև Սևանա լճի ձկան և խեցգետնի պաշարները: Սակայն մենք, օգտագործելով մեր մյուս ծրագրերը, փորձում ենք հնարավորություն ստեղծել, որպեսզի հաշվարկենք այն քանակը, որը կարելի է թույլատրել՝ համարելու արդյունագործական:

Այսինքն՝ որքան կհանեն, որտեղ կհանեն, ինչ որսագործիքով և ինչ որսաչափով կհանեն, դա արդեն նրանք պատասխանատվություն չեն կրում դրա համար: Այն, որ լճում սիգի արգելքն ընդհանրապես չկա, դա մենք նույնպես տեսնում ենք: Որպես պատասխանատու կազմակերպություն՝ մենք մինչ այսօր չգիտենք՝ սիգի արգելք գոյություն ունի լճում, թե՛ ոչ: Երբ գալիս է դեկտեմբեր ամիսը, մեզ ասում են՝ մեկ հատ գրություն գրեք, թե ինչու պետք է դեկտեմբերից հունվար ամիսներին սիգի որսն արգելվի: Եվ մենք գրում ենք, որովհետև դա վերարտադրման շրջան է: Բայց ինչու մինչ այդ չի արգելված, կամ արգելված է, թե չի արգելված: Այդ հարցը նույնպես մնում է բաց:

Կենսատեսուրսների հետ կապված շատ կարևոր է գետերի վիճակի բարելավումը: Ցանցավանդակների ծրագրով բավական շատ մանրաձուկ էր բաց թողնվում: Մինչ ցանցավանդակները նախարարությունը հսկայական միջոցներ էր տրամադրում մանրաձուկ գետեր բացթողնելու համար: Բայց ինչ էր ստացվում, որ այդ գետերով ձուկը չի կարող բարձրանալ և իջնել, որովհետև ճանապարհին շատ արգելքներ ու խոչընդոտներ կան:

Ձկնորսն այն մարդն է, որը սրտացավ վերաբերմունք ունի: Ճիշտ է՝ սիգը մեզ համար էլ է սննդի աղբյուր, բայց դա ավելի շատ ջրահավաք ավազանի բնակչության ապրուստի միակ աղբյուրն է: Քանի դեռ լուծված չեն սոցիալական հարցերը, մենք չենք կարող սպասել, որ Գեղարքունիքի մարզի բնակիչը պետք է ըմռնումով մոտենա և չմտնի լիճ: Բավական դժվար է որսագողության դեմ պայքարելը, որպեսզի երկու տարի կարողանանք հասնել այն բանին, որ սիգը կարողանա վերարտադրվի և ունենանք ձկան համապատասխան պաշարներ: Չնայած վերջին տարիներին նկատվում է ձկան պաշարների մի փոքր ավելացում:

Լճում խեցգետնի հայտնվելու պահից կանխակալ վերաբերմունք է ձևավորված: Անընդհատ շահարկվում է այն գաղափարը, որ այն օտարածին կենդանի է և պետք չէ լճում լինի՝ մոռանալով, որ դա նաև սոցիալական խնդիր է լուծում: Ձկան բացակայության պայմաններում խեցգետինը դարձել էր ապրուստի միակ միջոցը: Հիմա սրբում են լճում

խեցգետնի պաշարը... Եթե դուք մտնեք «Երևան սիթի», կտեսնեք, որ այնտեղ 3 սմ-ից սկսած խեցգետին է վաճառվում, ընդ որում՝ 7000 դրամից սկսած: Իմ բելառուս գործընկերները զանգում են ինձ Բելառուսից և ասում՝ ձեզ մոտ օրենք գոյություն չունի², ամբողջ բելառուսական շուկան լցված է ձեր մոտից տեղափոխված ձկնկիթով ու խեցգետնով:

«Էմի ֆրուտի» պիլոտային ծրագրի և ցանցավանդակների աշխատանքները վերահսկում է մեր ինստիտուտը: «Էմիֆրուտի» ազդեցությունը մենք 0-ական ենք համարել, որովհետև որքան էլ կանոնավոր դիտարկումներ ենք կատարել, ոչ մի ազդեցություն չենք գնահատել: Այստեղ իրավիճակը մի քիչ այլ է, լճում գոյություն ունեն ջրային հոսանքներ, որոնք նաև աղտոտվածությունը տեղաշարժում են և զարմանալի է, եթե անմիջապես ցանցավանդակի մոտ աղտոտվածություն չկա, հոսանքի ուղղությամբ որոշակի աղտոտվածություն գրանցվում է: Առ այսօր ցանցավանդակների տված մեծ վնասի մասին չենք խոսում, որովհետև նման փաստ մենք չունենք: Բայց չի կարող ցանցավանդակն իր ազդեցությունը չունենալ Սևանա լճի ջրի որակի վրա: Այս մասշտաբներով աճեցվող ձկան դեպքում մենք դեռևս լուրջ փոփոխություններ լճում չենք հայտնաբերել, իսկ առանց փաստերի գիտական հիմնարկությունը որևէ բան արգելելու իրավունք չունի:

Վերջերս մեզ մոտ էին մեր գերմանացի գործընկերները, ովքեր ցույց տվեցին, որ բավական մեծ քանակի ֆոսֆորի միացություններ կան լճում և ցույց տվեցին նաև, որ հիպոլիմնիոնի սահմանները կրճատվում են: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր սմ-ի իջեցում կարող է լճի համար որոշակի բացասական ազդեցություն ունենալ:

Մի անգամ ականատես եմ եղել, որ Սևանի հանձնաժողով են մտել Հայջրպետկոմի ներկայացուցիչները և առանց հիմնավորման ու հաշվարկների երդվում էին, որ բացասական հաշվեկշիռ չի լինելու: Հետևաբար, Ազգային ժողովը, որը որոշում է կայացնում, պետք է իր ձեռքի տակ ունենա համապատասխան հիմնավորում ու հաշվարկ և որոշում կայացնելուց առաջ գոնե լսի այդ մասնագետին, ով իր վրա պետք է պատասխանատվություն վերցնի ասելու, որ նրա հաշվարկներից հետո լճում մակարդակի իջեցում չի կատարվելու: Միայն այդ դեպքում մենք կարող ենք հասնել դրական հաշվեկշռի:

- **Կարինե Դանիելյան՝ «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ.**

80-ական թվականներին 40 ինստիտուտ աշխատեցին Սևանի ծրագրով, և որոշումը առնվազն 6 մետրն էր, որպեսզի լճի ինքնամաքման հնարավորությունները, բալանսը նորմալ վիճակի հասներ: Ինքներս ենք զարմացել, թե ինչքան կախված է ջրի մակարդակից: Բարձրանում է մակարդակը, շատ արագ լիճն արձագանքում է, իջնում է՝ նույնպես:

Հետաքրքիր աշխատանքներ են արվել ԵՊՀ-ի գենետիկայի ամբիոնի և Ագրարային համալսարանի կողմից: Ագրարային համալսարանն ուսումնասիրել է Սևանի ափամերձ տարածքները և բավական մեծ քանակությամբ ծանր մետաղներ է հայտնաբերել, կապված և՛ հանքարդյունաբերության, և՛ թափոնների կուտակման հետ: ԵՊՀ-ն ուսումնասիրել է ձկները և մուտագենեզի բարձր տոկոս է հայտնաբերել ձկների մեջ: Եվ իրենք ենթադրել են, որ դա կարող է լինել ծանր մետաղների ազդեցություն:

Լրացուցիչ ջրառի հարցը մեզ միշտ է անհանգստացրել, և Հանրային խորհրդի էկոլոգիական հանձնաժողովում հարցը քննարկել ենք: Նամակ ենք ուղղել Նիկոլ

Փաշինյանին, որտեղ նշել ենք, թե որքան մակարդակից է կախված Սևանա լճի ջրի որակը: Առաջակել ենք այս տարի գերծ մնալ լրացուցիչ ջրառից, հատկապես որ կառավարության ծրագրում կա կետ, որ նախատեսվում է ռոռզման համակարգի վերականգնում, որպեսզի կորուստները պակասեն:

Մասնակցել ենք նաև մի քանի քննարկումների: Ոռոզման համակարգն այնպիսի վիճակում է, որ դժվար է ասել դրան ռոռզման համակարգ: Կորուստները հասկանալի են՝ խողովակաշարը շարքից դուրս եկած է: Մեր նամակի արդյունքում Փաշինյանը հարցն ուղարկել է Ջրային կոմիտե և Բնապահպանության նախարարություն քննարկելու: Ջրային կոմիտեում ասացին, որ համակարգն այն վիճակում է, որ մենք չենք կարող պատասխան տալ, թե ինչ կլինի: Բնապահպանության նախարարությունը լայնածավալ ուսումնասիրություն արեց, եկան այն եզրակացության, որ կարողանան մինիմիզացնեն դա:

- **Էդվարդ Արզումանյան՝ Էներգետիկ փորձագետ.**

2001 թ. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքն ընդունելուց հետո այնքան ժամանակ է անցել, այնքան իրադարձություններ, իրավիճակն այնպիսին է, որ ստիպում է մտածել «Սևանա լճի մասին» օրենքը վերանայելու մասին, այն ավելի նպատակասլաց դարձնելու մասին:

Հանկարծ դուք չընդունեք, թե Սևանից հավելյալ ջրառ է իրականացվում էներգետիկ նպատակներով: Ոչ: Իմ տանն ունեմ դոստուպ, ամեն րոպե, ամեն ժամ հետևում եմ էներգոհամակարգի աշխատանքին, որտեղ ինչ է աշխատում, որքան է արտադրում և այլն: Այս տարի դեռևս ոչ մի րոպե Սևան-Հրազդանի այն առաջին երկու կայանը՝ Սևան և Հրազդան ՀԷԿ-երը, չեն աշխատում: 0 է: Աշխատում են միայն այն կայանները, որոնք սնվում են Մարմարիկ գետով, որը լցվում է Հրազդան գետը: Ես առաջակություն եմ անում, որ Ջրպետկոմը, որը տիրապետում է պատասխանատու հարցերին, իր մոտ կարգավորի Սևանից բաց թողնվող ջրի ծախսը: Ըստ պաշտոնական տվյալների՝ ջրի կորուստները կազմում են 40-45 տոկոս: Իմ դիտարկումները և հաշվարկները ցույց են տալիս, որ եթե կեսը լինի գողությունը, երբ ջուրը ծախսվում է, բայց չի վճարվում, նույնպես ջրի կորուստ է գրանցվում: Մնում է 20-15 տոկոսը, որը իսկապես ջրի տեխնիկական կորուստներ են, եթե զբաղվենք դրանց լրիվ կամ մասնակի վերացմամբ, այդ բոլորը մեզ հանարվորություն կտա, որ չկատարենք Սևանից հավելյալ ջրառ, այլև՝ այն հիմնական ջրառը, որ 2001 թ. օրենքով 170 միլիոն խորանարդ մետր է, այդ թիվը նվազեցնենք, հասցնենք 100-ից պակաս: Բայց այդ բանը պետք է անի Ջրպետկոմը:

Ես կարծում եմ, որ դատարանն աշխատանքը պետք է այնպես կազմակերպի, որ պարզ հնչի մեղադրանքը՝ ում ենք մեղադրում: Իմ հաշվարկներով մենք ունենք 5 կազմակերպություն, որոնք պետք է պատասխան տան Սևանի ջրի համար՝ Ջրպետկոմը, «Սևան» ազգային պարկը, Բնապահպանության նախարարությունը, Գեղարքունիքի մարզպետարանը և Սևանի հանձնաժողովը: Ես կուզեի, որ մեղադրողները ասեին, որ կազմակերպությանը այս հինգից ինչում են մեղադրում, և տա դրանց հիմնավորումը:

- **Լևոն Գալստյան, աշխարհագրագետ**

Սևան-Հրազդան հիդրոէլեկտրակայանների կասկադը սեփականաշնորհվեց ռուսական ընկերությանը: Երբ իրենց փաստաթղթերը նայում ես, այնտեղ գրված է՝ մենք հնարավորություն ունենք օգտագործել տարեկան 350-440 միլիոն խորանարդ մետր Սևանա

լճից, որը վտանգ չի ներկայացնում լճի էկոհամակարգին: Դա գրված է իրենց 2005 թ. փաստաթղթում: Դա նշանակում է, որ կա, կամ եղել է գաղտնի պայմանավորվածություն, որ այս ջրթափով թողելու են ոչ թե 170 կամ լրացուցիչ ավելացրած 200 քանիսը, այլ՝ ավելի լուրջ քանակ, որը քննության կարիք ունի: Մենք մեր կայքում ունենք մոտավորապես 10 հոդված՝ դրա վերաբերյալ, թե իրականում Սևանից որքան ջուր է բաց թողնվել, շատ ավելի շատ, քան՝ պաշտոնական տվյալներով: Դա պետք է քննության առնվի:

Որոտան-Արփա թունելի հարցը:

Երկու օր առաջ պարզվեց, որ այնտեղ 2,5 միլիարդ դրամը կորել է: Ես համոզված եմ, որ ավելի շատ է կորել: Ինձ հետաքրքրում է նաև Որոտան-Արփա հատվածի խնդիրը: 2004 թ. ժապավենը կտրել, բացումը կատարել են, բայց ոչ մի կաթիլ չեն տեղափոխել, ու անհասկանալի են պատճառները և հետևանքները:

Պետք է նաև հասկանալ, թե Արփայից և Որոտանից տեղափոխվող ջրերը ազդեցություն ունենալու են Սևանա լճի ջրի որակի փոփոխության վրա: Ինչպես ես հասկանում եմ, սա լուրջ գիտական հետազոտության առարկա չի դարձել և այսօր էլ չկա: Ինչպես ես հասկանում եմ, ոչ մեկը շաբաթը մեկ անգամ Արփա-Սևան թունելից Սևան լճով ջրի որակի բազմակողմանի անալիզ չի անում:

Մյուս հարցը 250 մետրանոց կոլեկտորի հարցն է, որ կառուցվել է Խորհրդային Միության ժամանակ: Դա պետք է անպայմանորեն ներառել, որպեսզի բացահայտվի պետականորեն՝ ուր է անհետացել այդ կոլեկտորը: Պետք է բացահայտել և պետք է պատասխանատվություն կրեն այն մարդիկ, պետական և մասնավոր կառույցները, որոնք այդ կոլեկտորն իր խողովակաշարով յուրացրել են մեր պետությունից:

Գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի հարցը:

Մեր ամբողջ խմբի կարծիքն է, որ այդ փորձագիտական կառույցը ստեղծված է եղել դակելու կառավարության որոշումները: Իրենք ոչ մի լուրջ փորձագիտական վերլուծություն ոչ մի թեմայի վերավերյալ չեն կատարել՝ սկսած Սևանի էկոլոգիական ծրագրերից, վերջացրած Ամուլսարի ծրագրով, որի համար տվել է իրականությանը հակասող եզրակացություն:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը

«Սևանա լճի մասին» օրենքը պետք է կարդինալ և ամբողջական փոփոխության ենթարկվի: Այդ օրենքը կարող է՝ շատ լավ է գրված, բայց այնպիսի թյուրմեթոդներ և իրար հակասող ու անհասկանալի բաներ կան, որ դու նույնիսկ չես հասկանում՝ ինչն է թույլատրվում, ինչը չէ: Այնքան խառնաշփոթ ձևով է գրված, որ պետք է հստակեցվի բոլոր մասրամասներով, որ ոչ մի տարրերը չառաջանա, որ այստեղ օրինակ՝ թափոն կարելի է տեղադրել, թե՛ ոչ: Այդ օրենքը պետք է ամբողջությամբ վերաձևակերպված ընդունվի:

- **Ռոզա Ջուլիակյան՝ ԷկոԼուր-ի փորձագետ.**

Սևանա լճի հիմնական խնդիրներն են.

- Կառավարության կողմից ընունված ձախողված ծրագրեր և չգործող իրավական ակտեր,
- «Սևանա լճի մասին», «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման մասին» ՀՀ օրենքների հիմնական պահանջի՝ Սևանա լճի մակարդակի մինիմում 6 մետրով, գումարած նաև ալիքի 1,5 մետրը, բարձրացում մինչև 1905,0 մետր նիշը, չկատարում:/ Այս միջոցառման ապահովումը հնարավորություն կտար ջրի հիպոլիմնիոն շերտի վերականգնում և կկանխեր լճի ճահճացման երևույթները/,
- Ծովի մակարդակից 1905 մետր նիշից ներքև Սևանա լճի ափամերձ տարածքներում կապիտալ շինարարության իրականացում,
- Ջրի մակարդակի նախատեսված բարձրացման արդյունքում ջրի տակ մնացած անտառային տարածքներ,
- Հայաստանի, ինչպես նաև Կովկասյան տարաշրջանի բնակչության կենսաապահովման ռազմավարական նշանակալից օբյեկտի՝ կոմունալ—կենցաղային արտահոսքերով, գյուղատնտեսական և արդյունաբերական թափոններով աղտոտված քաղցրահամ, հնարավոր խմելու որակի 32,92 մլրդ մ³ ծավալով ջուր,
- Սևանա լճի ձկնապաշարների նվազում և էնդեմիկ տեսակների անհետացում,
- Շարունակական ապօրինի ձկնորսություն,
- Բշխանի ձվադրավայր հանդիսացող գետերի վրա բնապահպանական բոլոր նորմերի խախտմամբ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման հետևանքով ձկների ձվադրավայրեր տանող ձկնուղիների արգելափակ վիճակ,
- Սևանա լճի ափերի ապօրինի մասնավորեցում և կառուցապատում, հանգստացողների իրավունքների խախտում: /Ազգային պարկի տարածքում 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառվել է շուրջ 1690 միավոր ինքնակամ կառուցված (կամ տեղադրված) շենք, շինություններ/,
- Գեղարքունիքի մարզում գործող 29 հանքերից առնվազն երկուսի՝ Սոթքի ոսկու հանքավայրի և Շորժայի դունիտ-պերիդոտիտայի հանքավայրերի, ինչպես նաև Արփա և Որոտան գետերի ձևավորման վայր հանդիսացող Ամուլսարի ոսկու հանքի հավանական շահագործման արդյունքում անմիջական բացասական ազդեցություն Սևանա լճի վրա,
- Արհեստական ձկնաբուծության մեկնարկված ծրագրի արդյունքում տարեկան մինչև 50 հազար տոննա արհեստական կերով Սևանա լիճ ջրի որակի վրա ազդող անկանխատեսելի և անկառավարելի հավանական հետևանքներ,
- Սևանա լճի մերձակա 92 համայնքներում գործող 27 պաշտոնական (և բազմաթիվ այլ տարերայնորեն ձևավորված և չհսկվող), բնապահպանական և սանիտարական նորմերին չհամապատասխանող աղբավայրերի բացասական ազդեցություն լճի վրա .
- Սևան թափվող առափնյա 43 համայնքների, որից 5-ը՝ քաղաքների, կոյուղաջրերի ներհոսք Սևանա լիճ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԵՐ

- 2004 թվականին շահագործման հանձնված տարեկան 165 մլն. խմ ջրատարողությամբ Որոտան-Արփա ջրատարն առ այսօր անգամ մեկ խմ ջուր չի տեղափոխել Սևան:

- ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ և Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի 10 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային և տարեկան 1356952400.0 դրամ պետական բյուջեի միջոցներով 2010-2017թթ. նախատեսված «Արփա-Սևան» թունելի առավել վթարային հատվածների հիմնանորոգման ծրագրի կատարման համար սահմանված 2017թ-ի փոխարեն ավարտվել են 2019 թվականի սկիզբին: Այսինքն ախատանքների ձգձգման արդյունքում պետական միջոցներից 2 տարի ծախսվել են լրացուցիչ գումարներ: Հատկանշանակալի է, որ ըստ <http://www.prosecutor.am/am/mn/7440/> կայքի հաղորդագրության, «Արփա-Սևան» թիվ 2 թունելի հիմնանորոգման և պահպանման աշխատանքների կատարման գործընթացներում նախնական քննության արդյունքներով պարզված պետությանը պատճառված ահռելի վնասների, առերևույթ կոռուպցիոն բազմաթիվ չարաշահումների և հանցագործությունների հատկանիշներով ՀՀ գլխավոր դատախազությունում հարուցվել է քրեական գործ: Նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեին:

- ՀՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 28-ի N 1029-Ն, 2014թ. սեպտեմբերի 25-ի N 1052-Ն որոշման համաձայն՝ յուրաքանչյուր տարի Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում անտառաքրման աշխատանքների իրականացման համար պետական բյուջեից հատկացվել է 125,4 մլն. դրամ, իսկ ձկան պաշարներն արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովման նպատակով՝ 60,0 մլն. դրամ գումար: Որ այդ գումարները նպատակային չեն օգտագործվել, հաստատում է 29.04.2019թ, առաջ ՀՀ ԳԱԱ-ում անցկացված գիտաժողովում Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի եզրակացությունը, որտեղ նշվում է, որ շուրջ 500 հա ջրածածկ տարածքներ ենթակա են մաքրման կոճղարմատներից, այսինքն, այդքան մակերես չի մաքրվել: Ինչ վերաբերում է մանրաձկան բացթողմանը, ապա արդյունքները կասկածի տակ են դնում ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և կենդանապանության գիտական կենտրոնի կատարած հետազոտությունները:

- ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 15-ի «Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնման ծրագիրը հաստատելու մասին (2014-2023 թթ.)» N.1441-Ն որոշման հավելված 1-ով հաստատվել է, որ ջրածածկման հետևանքով 4000 հա անտառային տարածքի վերացման հետևանքների մեղմացման նպատակով նախատեսվում է «Սևան» ազգային պարկի տարածքում հիմնել 661,30 հեկտար անտառ, իսկ հավելված 2-ով սահմանվել են անտառվերականգնման ժամանակացույցը և դրա համար պահանջվող գումարները: Այս որոշման պահանջները նույնպես չեն կատարվել, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չհատկացման պատճառով:

- Չի կատարվել ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 23-ի «Սևանա լճի ջրհավաք ավազանի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիների բնակավայրերում և բնակավայրերից դուրս օբյեկտների շահագործումից առաջացող կեղտաջրերի մաքրման մասին» N 397-Ն որոշմամբ սահմանված պահանջները: Որոշման մեջ նշված գոտիներում գործող օբյեկտները չեն պահպանել որոշմամբ պահանջվող լոկալ կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման պահանջը:

- ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 21-ի «Սևանա լճում էկոհամակարգերի վերականգնման նպատակով տնտեսական գործունեություն իրականացնելու մասին» N 473-

Ն բացառապես Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման նպատակով ցանցավանդակային տնտեսություններ հիմնելու մասին որոշումը ինչպես տնտեսական, այնպես էլ բնապահպանական առումներով նույնպես անիրատեսական է /Օրագիրն իրականացնում են «Սևանի իշխան» և «Սևան Ակվա» փակ բաժնետիրական ընկերությունները: Կառավարության պահուստային ֆոնդից 2013-2017 թթ. համալիր ծրագիրն իրականացնելու նպատակով հիմնադրամին որպես նվիրաբերություն հատկացվել է 9,0 մլրդ դրամ: Այդ կազմակերպությունների կողմից ապրանքների ներկրման համար գիջվել են մաքսատուրքերը: Չնայած այդ ամենին, 2018 թ. հուլիսի 1-ի դրությամբ փաստացի առկա ձկան քանակը կազմել է 92 տոննա: 2015-2018 թթ. ընթացքում լիճ է բաց թողնվել շուրջ 2,355,000 մանրաձուկ: Պատասխանատուների խոսքով, սակայն, իրացումներից ակնկալվող ծավալները որոշակիորեն շեղվել են ծրագրային ցուցանիշներից տարերային ձկնորսության, ձկների հիվանդությունների, գետերից անկանոն ջրառի, ձվադրավայրերի խնդիրների առկայության պատճառով: Խոստացած 180 աշխատատեղի փոխարեն ներկայումս ունեն մոտ 80 ունեցող աշխատող: Նշեմ, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձագիտական եզրակացության մեջ բացակայում են ձկների հիվանդությունների և մակաբույծների ինկուբացման և տնտեսություններում աճեցված ձկներից՝ ձկների վայրի հանրային փոխանցման, ցանցավանդակային տնտեսություններից առաջացած օրգանական աղտոտման, ցանցավանդակային տնտեսություններից առաջացած քիմիական աղտոտման ցանցավանդակային տնտեսություններից գենետիկորեն տարբերվող ձկների փախուստի և վայրի տեսակների հետ նրանց խաչասերման ռիսկերի մեղմացման և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման գործողությունները/:

Սևանա լճի ձկնապաշարների նվազում, ապօրինի ձկնորսություն

Ըստ ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և կենդանապանության գիտական կենտրոնի հետազոտությունների, եթե 1990-ական թվականներին Սևանի սիգի ձկնապաշարը մոտ 30 000 տոննայի էր հասնում, ապա այսօր այդ պաշարները գնահատվում են 1200 տոննա:

Ըստ կենտրոնի գնահատման՝ իշխանի վերացման հիմնական պատճառը սկզբնական շրջանում ափամերձ գոտու վերացումն էր, որտեղ գտնվում էին իշխանի հիմնական ձվադրավայրերը, այնուհետև՝ ձկնագոռությունը: Սևանում բնակվող իշխանի 4 ցեղատեսակներից 2-ը՝ ձմեռային բախտակը և բոջակը, անվերադարձ կորել են: Սևանի էնդեմիկ տեսակներից կողակի և բելլուի արդյունագործական պաշարներ գոյություն չունեն: 1980-ական թվականների սկզբներին ներմուծված խեցգետնինը և կարասը սկսել են արագ բազմանալ: Ներկայումս ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խեցգետնի պաշարները կտրուկ նվազել են գերորսի պատճառով: Չկա ձկների բնական վերարտադրություն, քանի որ վերարտադրությունը կատարվում է միայն գետերում, իսկ ինչպես հայտնի է, ներկայումս ոչ մի գետ չի համապատասխանում այն պայմաններին, որոնք անհրաժեշտ են ձվադրավայր լինելու համար: Դրա հիմնական պատճառը Սևան թափվող գետերի վրա փոքր ՀԷԿ-երի կառուցումն է, որոնք խաթարում են գետի ջրային ռեժիմը, խոչընդոտում են ձվադրման համար Սևանից դեպի գետի ակունք բարձրացող ձկների անցմանը:

Ապօրինի ձկնորսության դեմ պայքարն անարդյունավետ է. հայտնաբերված և տարբեր վայրերում, այդ թվում նաև սննդի և առևտրի կետերում ազատ վաճառվող և իրացվող քանակներն անհամեմատելի են հայտնաբերված և առգրավված սիգի քանակներին /օրինակ՝

2015թ շտաբային բնակարարության նախարարության բնակարարական տեսչությունն առգրավել է 1903,5 կգ սիգ տեսակի ձուկ, ինչպես նաև 153 կգ կարաս և այլ տեսակի ձկներ. առգրավվել է 417 հատ ձկնագոռոթյան պարագա: 2016թ. ընթացքում, ներառյալ ձկնորսության արգելքի ժամանակահատվածում, նույն կառույցի կողմից առգրավվել է 2800կգ սիգ տեսակի ձուկ, ինչպես նաև կարաս և այլ տեսակի ձկներ, առգրավված 327 կգ խեցգետինը կենդանի վիճակում բաց է թողնվել ջրային ավազան, առգրավվել է 117 հատ ձկնագոռոթյան պարագա/:

Չնայած նրան, որ Սևանա լճում արգելված է սիգի արդյունագործական ձկնորսությունը, ՀՀ-ում գործում են սևանի սիգի ապխտած և պահածոյացված տեսականու արտադրությամբ զբաղվող կազմակերպություններ, մասնավորապես «ՌՈՒՍ ԱՄ» ՍՊԸ», «ԳԱԼԻԼԻԱ» ՍՊԸ, որոնց զարգացման ծրագրերում բառացիորեն գրված է. «սիգ տեսակի ձկան մթերումն իրականացվելու է ձկնորսությամբ զբաղվող անհատներից»: Այս փաստերը վկայում են այն, որ Սևանա լճից սիգի որսը կրում է կազմակերպված և համակարգված բնույթ:

Ջրի որակական հատկանիշների նվազում

Համաձայն պաշտոնապես հրապարակված վիճակագրական տվյալների՝ 2017 թ. Սևանի ջրում հայտնաբերվել են քրոմի, վանադիումի, մագնեզիումի, սելենի, թոլյլատրեյի կոնցենտրացիան գերազանցով քանակություններ:

ԹԿՊ5-ի սահմանային թոլյլատրեյի կոնցենտրացիան գերազանցվել է 1.2-1.4 անգամ, ԹԶՊ-ինը՝ 1.2-2.0 անգամ, պղնձինը՝ 1.3-7.3 անգամ, քրոմինը՝ 2.0-3.8 անգամ, վանադիումինը՝ 5.0-5.9 անգամ, մագնեզիումինը՝ 1.2 անգամ, սելենինը՝ 5.7-7.0 անգամ; Մինչ օրս լրիվ բեռնվածությամբ չեն աշխատում 3 քաղաքների կոյուղու մեխանիկական մաքրման համար կառուցված կայանները՝ Գավառ-60%, Մարտունի 35%, Վարդենիս-20 % :

ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՃԱՆԱԶԵԼ՝

- ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

- «Սևանա լճի մասին», «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման մասին» ՀՀ օրենքների կիրարկումների չապահովման համար

- Որոտան- Արփա ջրատարի կառուցման, Արփա-Սևան թունելի առավել վթարային հատվածների վերանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողություն չսահմանելու համար:

Ա. «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻՆ

- Ազգային պարկի գործունեության նկատմամբ բավարար վերահսկողության չիրականացման համար

- Ազգային պարկի գործունեության մասին հաշվետվությունների լսումների և դրա գործունեության վերստուգման արդյունքները քննարկումներին ձևական մոտեցման համար.

- Ազգային պարկի ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ պատշաճ վերահսկողության չիրականացման համար

- անգործություն, կամ ոչ արդյունավետ աշխատանքի համար

Գ. «ՄԵՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-Ի ՆԱԽԿԻՆ և ՆԵՐԿԱ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝
նրանց կողմից ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 927-Ն որոշմամբ հաստատված պարկի կանոնադրական հետևյալ պահանջների

1. Պարկի ռեակրեացիոն և տնտեսական գոտիներում առանց կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման կեղտաջրեր առաջացնող օբյեկտների շահագործման չբացառման:

2. Պարկի արգելոցային գոտիներում՝ Սևանի իշխանի, Սևանի բեղլուի, Սևանի կողակի Էնդեմիկ ձկնատեսակների բնական զարգացումն ու ձվադրումն ապահովող ուղիների պահպանության ռեժիմի չպահպանության համար:

3. «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրում գիհի բազմապտուղ, գիհի գարշահոտ, գիհի կազակական և կաղնի վրացական տեսակների բնական միջավայրի չպահպանման համար:

4. Ազգային պարկի տարածքում ապօրինի շինությունների կառուցման չկանխարգելման, ոլորտում բացիթողի վիճակի համար:

5. ՀՀ կառավարության 18 դեկտեմբերի 2008 թվականի «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին N 1563-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերի պահանջների չպահպանման համար /10-րդ՝ լողափերի կազմակերպման համար ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող հողամասերի մակերեսների գումարային չափը չպետք է գերազանցի հողամասի ընդհանուր մակերեսի 80 տոկոսը, 11-րդ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ լողափի և բուֆերային գոտիներում գտնվող տարածքների նկատմամբ կնքվող համապատասխան պայմանագրերում նախատեսել դրույթների սահմանում/:

6. Ապօրինի ձկնորսության դեմ պատշաճ հսկողություն չսահմանելու համար:

Դ. ՀՀ ԲՆԱՊԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ՝

1. 2013թ. և հետագա տարիներին Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում անտառաքրման աշխատանքների իրականացման համար պետական բյուջեից 125,4 մլն.դրամ, ինչպես նաև ձկան պաշարներն արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովման նպատակով 60,0 մլն. դրամ հատկացված գումարների /ՀՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 28-ի N 1029-Ն, 2014թ. սեպտեմբերի 25-ի N 1052-Ն որոշում.../ ոչ-նպատակային ծախսման, այդ աշխատանքների նկատմամբ վերահսկողության չկազմակերպելու համար:

2. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման բնագավառներում անմիջական ազդեցության գոտում գտնվող տեղական ինքնակառավարման մարմիններին այդ աշխատանքներում չներգրավելու, հասարակական քննարկումներին համայնքի բնակչության մասնակցության չապահովման համար

3. Սևանա լճի ափամերձ տարածքներում նոր օբյեկտների նախագծային փաստաթղթերը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության ենթարկելիս այդ օբյեկտների կեղտաջրերի մաքրումը կենսաբանական մաքրման կայանների միջոցով որպես պարտադիր պայման չընդունելու համար /ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 23-ի «Սևանա լճի ջրհավաք ավազանի կենտրոնական ել անմիջական ազդեցության գոտիների

բնակավայրերում եվ բնակավայրերից դուրս օբյեկտների շահագործումից առաջացող կեղտաջրերի մաքրման մասին» N 397-Ն որոշում/:

4. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման բնագավառներում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկող-վերահսկող կառույցների աշխատանքների անբավարար կազմակերպման և իրականացման համար:

Ե. ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՀԻՄՄ՝ ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

1. ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ և Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի 10 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային միջոցներով 2010-2017թթ. նախատեսված «Արվիա-Սևան» թունելի առավել վթարային հատվածների հիմնանորոգման ծրագրի կատարման գործընթացներում տեղ գտած չարաշահումների, կոռուպցիոն դրսևորումների, ծրագրի իրականացման ժամկետների ձգձգման հետևանքով լրացուցիչ պետական ծախսերի համար /տարեկան պետական ֆինանսավորումը 1356952400 դրամ/

2. Արարատյան հարթավայրի գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման նպատակով Սևանա լճից ջրառի ծավալների նվազեցմանն ուղղված՝ ջրակորուստների կանխարգելման միջոցառումներ չիրականացման համար:

Զ. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ / ՆԱԽԿԻՆՈՒՄ ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ/

Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման բնագավառներում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ իրականացված անբավարար վերահսկողության համար:

5. Պատասխանողների փաստարկները և իրավական դիրքորոշումը

- **Արայիկ Հունանյան՝ Սևան Ազգային պարկ ՊՈԱԿ-ի փոխտնօրեն**

«Սևան ազգային պարկում տարածքներ մասնավորեցնելը օրենքով արգելված է, եղել են մի քանի հողակտորներ, որ օրենքի խախտմամբ սեփականաշնորհվել են, մասսայական չկա:

Շինությունները մասնավորեցված են դեռևս 90-կաններից: Ջրածածկվում են և՛ նոր կառուցվածները, և՛ 90-ականներինը: Կադաստրի պետական կոմիտեի կողմից 1905 նիշից ներքև գտնվող 4729 շինություն էր գնահատված 2011 թ., բայց բոլորը միայն շենքեր չեն, պարիսպը, եզրաքարերը նույնպես հաշվառվում են որպես շինություն և առանձին միավոր: Հիմա էլ վարչապետի հանձնարարականով ուսումնասիրություն է կատարվում, որ այդ շենք-շինությունների ապամոնտաժման հարցը քննարկվի:

Շենք շինությունների կառուցապատման թույլտվությունները տալիս են համայնքի ղեկավարները: «Սևան» ազգային պարկը դրա հետ կապ չունի: Ազգային պարկի ցանկացած

կտոր ինչ-որ համայնքի վարչական սահմանում է գտնվում: Վարձակալական վճարներից 30 տոկոսները փոխանցվում է համայնքներին:

Երբ նախագիծ են անում, այն գնում է համալիր փորձաքննության՝ քաղաքաշինական և բնապահպանական: Բնապահպանական փորձաքննության դեպքում մեզ մոտ է գալիս, եթե տեսնում ենք՝ խախտում կա, կարող է փորձաքննությանը դրական եզրակացություն չտրվի: Եղել են դեպքեր, որ բնապահպանական փորձաքննություն չի եղել, բայց համայնքը տվել է թույլտվություն:

Ջրածածկվող տարածքների մաքրման մասին

5000 հա կանխատեսված է եղել 2001 թ. ընդունված համալիր օրենքով, որից 2064-ը մաքրված է՝ 2005 թ. սկսած: Պետական ֆինանսավորմամբ է իրականացվում:

«Watermaster»-ի մասին

Այն կազմակերպությունը, որը շահել է տարածք մաքրելու մրցույթը, նաև ջրածածկ տարածքներ է մաքրել: «Watermaster»-ը տրամադրվել է իրենց վարձակալության դիմաց, իրենք ջրի մեջ 5 հեկտարից ավելի մաքրել են: «Watermaster»-ը ջրի մեջից կոճղեր էլ է հանում:

Առաջիկա հինգ տարվա համար մրցույթ հայտարարեցին, որ հինգ տարվա մաքրումը իրականացնեն մոտ 400 հեկտարի համար: Ով շահեց, պայմանագիր կնքվեց նրա հետ, հետո պարզվեց, որ առաջիկա տարիներին ինչ-որ հատվածներ կան, որ համադրվում են նախորդ տարիների մաքրումների հետ: Ինչ-որ կտորներ կային, թվերը հիմա չեն կարող ասել, դրա համար պայմանագիրը դադարեցվեց, հիմա նորից ուսումնասիրություն են անում:

Հիմա մենք մաքրում ենք մինչև 1.5 նիշը: 1.5 նիշը ջուր չկա, ջուրը 1901 նիշի վրա է: Իսկ այնտեղ չորի վրա առողջ ծառեր է պետք կտրել, որ ջուրը բարձրանա, չմնա այդ ջրի մեջ: Դա նորմալ երևույթ է:

Բացթողումների ու ջրի բարձրացման հետ կապված

Մտացվել է, որ տարածքները մաքրվել են, բայց որտեղ չի չխան է, դեղին ակացիա, բարդի, ոնց էլ մաքրեն, գետնի տակ արմատներ կան, եթե արմատը չջրածածկվեց, կարող է վերած լինել: Լճի բարձրացումը մաքրման աշխատանքներին զուգընթաց չի կատարվել, պիտի լիճը բարձրանա, որպեսզի նորից անտառ չդառնա այդ տարածքը:

«Սևան» ազգային պարկը 147 հազար 300 հա է, պետական սեփականություն է: Ազգային պարկի տարածքում 16 հա, դրանից առաջ 8-9 հա-ի անտառվերականգնման աշխատանքներ են կատարվել: Դա արվել է ազգային պարկի ուժերով:

Աննա Շահնազարյանի հարց - «Watermaster» մեքենան ի՞նչ վիճակում է և որտե՞ղ, քանի՞ տարի է գործում և քանի՞ տարի չի գործում: Եթե չի գործում, ինչն է չի գործում: Ի՞նչ տեխնիկական վիճակում է: Ինչն է պահվել «Սևան» ազգային պարկի դարպասների դիմաց: Քանի՞ աշխատող ունի «Սևան» ազգային պարկը, արդյո՞ք «Սևան» ազգային պարկը որպես կազմակերպություն ունի լիազորություն՝ հետևելու «Սևանա լճի մասին» մասին ՀՀ օրենքի կատարմանը, ազգային պարկի կառավարման պլանի կատարմանը, պարկի կառավարման պլանի կատարման նկատմամբ, վերահսկողություն կատարելու իրավասություն ունի՞, թե՞ ոչ:

Արայիկ Հունանյանի պատասխանը –«Watermaster»-ի համար այդ հարցը կարող էք ուղղել բնապահպանության ԾԻԳ-ին, միշտ իրենցն է եղել: Այդ տարի ԾԻԳ-ի աշխատանքներն ավարտվել էին, 3-4 ամիս մնացել էր մեզ մոտ: Հետո նորից հետ ենք հանձնել իրենց, դրանից հետո ում են տվել, չգիտենք:

«Սևան» ազգային պարկը կարող է անել այն, ինչ նշված է պայմանագրերի մեջ: Կան, որ պայմանագրով նախատեսված չէ, այլ՝ օրենսդրությամբ: Օրինակ՝ լողափը շահագործել միայն փրկարարական ծառայության առկայության դեպքում:

Այդ պայմանագրերը քաղաքացիաիրավական հարաբերություններ են, պայմանագրի մեջ կետ փոխելը այդպես հեշտ չի, եթե 20-25 տարվա պայմանագիր է, մարդն էլ իր իրավունքներն ունի: Եթե ինչ-որ բան փոխես, միայն դատարանով կարող ես: Եղել է, որ պայմանագրի մեջ գին են իջեցրել, հետո մտել են դատարան:

Աշխատողների թիվն 200 է: Տեսուչներ են, որոնք քիչ են: Ուրիշ պարկերը բնակավայրերից, ճանապարհներից հեռու են, հեշտ է պահպանել, մերը չորս կողմից բնակավայրեր են, ոտքը գցում են, մտնում պարկ:

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանը 2007-2011 թ. համար է: 2011 թ-ից հետո չունի: Գործում ենք մեր եղած կառավարման պլանով:

- **Վարդան Մամիկոնյան՝ «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի տնօրեն.**

Հայաստանում երբևէ այն կարգի մոնիթորինգ չի արվել, ինչ 2016-2018 թթ., ու հուսով ենք, որ նույն ձևով կշարունակենք: Ինչ վերաբերում է սարքերին, ապա կան մոնիթորինգի սարքավորումներ, դրանք տեղադրված են և դրանք չեն կարող Սևանի վիճակը բնութագրել, ամբողջ մոնիթորինգին էական օգուտ տալ, եթե չլինեն դրան զուգահեռ այն մոնիթորինգային աշխատանքները, որոնք իրականացվում են:

Հիմնադրամին տրամադրվել է 9 միլիարդ դրամ մեծ ծրագրի համար՝ Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման: Այդ օղակում ցանցավանդակային տնտեսությունը շատ փոքր մաս է կազմում, խիստ անհրաժեշտ, առանց դրա հնարավոր չէ: Բայց եթե ֆինանսական տեսանկյունից նայենք, 10 տոկոսից պակաս ներդրում է զբաղեցնում:

Դուք նշեցիք, որ խորհրդային տարիներին 4 ձկնաբուծարան է եղել: Հիմիկվա ձկնաբուծարանը, որ կառուցվել է այս ծրագրի շրջանակներում այդ չորսի հզորությունը գերազանցում է:

Ըստ ծրագրի, մենք պետք է բաց թողնենք մեր արտադրած մանրածկան 25 տոկոսը: Բայց չենք կարող շատ բաց թողնել, որովհետև մեծ մասը մենք պետք է աճեցնենք, վաճառենք, հետո դրանից ստացված եկամուտները դնենք ծրագրի մեջ: Այստեղ մի փոքր դիստնանս կա: Մենք բաց ենք թողնում մանր մանրածուկ, մինչև 1.5 գր կամ մի փոքր ավելի, իսկ ցանցեր տարվում են 50 և ավելի գրամ մանրածկներ, մոտավորապես մեկ տարով մեծ: Հետևապես, եթե մենք այս տարի բաց թողնենք մի քանակություն, հետո իմանանք, որ երեք անգամ շատ կտանք ցանցեր, բայց կարող է՝ չկարողանանք տանել և ապահովել արտադրություն: 2016 թ. շատ մեծ

քանակությամբ բաց ենք թողել՝ ակնկալելով, որ կկարողանանք 3 անգամ շատ տանել ցանցեր: Բայց չենք կարողացել: Պատճառները բազմաթիվ են:

2017 թ. մեր ցանցերը վնասվեցին, և լիճ տարված ամբողջ ձուկը կամ որսագողերի կողմից ոչնչացվեց, կամ մեծ մասը փախավ լիճ: Պետք է արձանագրենք, որ դրա շնորհիվ էր, որ ավելի քան 17 անգամ ավելացավ իշխանի պաշարը:

Մեզ մոտ փախուստը եղել է մոտավորապես 100 տոննա: Փախուստը եղել է ապրիլին, իսկ գնահատել ենք պաշարները հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Այդ ընթացքում որսագողերն իրենց գործը արել են: Մեծ չափի են փախել ցանցից: Մի զգալի մասը կուտակված է եղել հենց ցանցի հատվածում: Ու այդ պահին տեսնում էինք, որ պարկերով, կգ-ը 1000 դրամով լճից հանած իշխանը վաճառում էին: Ես անձամբ գնել եմ, որպեսզի համոզվեմ, որ դա մեր ձուկն է:

Որսագողության մասին չխոսելը ճիշտ չի լինի: Կարճադրյություն մեկ տարվա մեջ մենք բաց ենք թողել 265 հազար մանրածուկ: Հանկարծ մարդիկ նկատում են, որ գետի մեջ լիքը ձուկ կա, ցամաքեցնում են այդ գետը, ու ջրափոխից հավաքում են մանրածուկը:

Մեր աշխատակիցների թիվը մաքսիմում հասել էր 115, բայց հիմա կրճատվել է, կարծում եմ մի 80-90-ի սահմանում է: Մոնիթորինգի արդյունքում ասում են, որ 7000-10 հազար տոննա արտադրությունը մի գերազանցեք: Հակառակ դեպքում կարող է՝ լճին վնասեք: Մեր արտադրությունը այս պահին չի գերազանցում 100-150 տոննա: Խոսքը վերաբերում է տարեկան քաշաճին:

Մանրածկան գործարանի հզորությունը չի բավականացնում: Դա կարող է առավելագույնը մեր իշխանի պայմաններում 50 գրամ քաշով մինչև 2 միլիոն մանրածուկ արտադրել: Այս պահին մենք մինչև 2 միլիոն 50 գրամ մանրածուկ կարող ենք ստանալ:

Կերը ներկրում ենք Դանիայից, Հոլանդիայից, Իտալիայից, Ֆրանսիայից: Այդ երկրների մատակարար կազմակերպություններն իրենց արտադրած կերի կամ հեղինակության համար երբեք թույլ չէին տա, որ ինչ-որ մեկը կարողանա ասել, որ այդ կերի մեջ կա հորմոն: Կեր արտադրող աշխարհի ամենահզոր կազմակերպություններն են: Ինչ վերաբերում է նրան, որ սիգի վրա կարող է ազդել, դա բացառված է: Կերը հորմոն չի պարունակում: Հետազոտել են շատերը:

6. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր.

Սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները հետևյալն են.

1. Սևանա լճի ափերի ապօրինի օտարումը, վարձակալությամբ տրամադրումը և կառուցապատումը, հանգստացողների իրավունքների խախտումը:

2. Սևանա լճի ձկնապաշարների նվազումը և համայնքների աղքատացումը: Սևանա լճի ձկնապաշարների նվազումը և էնդեմիկ տեսակների անհետացումը, շարունակական ապօրինի ձկնորսությունը և ձկան պահածոների և այլ վերամշակման արտադրամասերի ապօրինի գործունեությունը:

3. Արհեստական ձկնաբուծության ծրագիրը, որի արդյունքում տարեկան մինչև 50 հազար տոննա արհեստական կեր է լցվելու Սևանա լիճ՝ ջրի որակի վրա ազդող անկանխատեսելի և անկառավարելի հետևանքներով:

4. Սևանա լիճ թափվող գետերի վրա կառուցված փոքր ՀԷԿ-երը շահագործվում են՝ առաջացնելով բազմաթիվ խնդիրներ: Մարզում գործող ՓՀԷԿ-ը պատճառ են դարձել գետերի ցամաքեցման, էկոհամակարգի վատթարացման, կենսաբազմազանության ոչնչացման և ոռոգման խնդիրների: Իշխանի ձվադրավայր հանդիսացող գետերի վրա բնապահպանական բոլոր նորմերի խախտմամբ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման հետևանքով ձվադրավայրեր տանող ձկնուղիները փակ են:

5. Ջրի մակարդակի նախատեսված բարձրացում, ինչի արդյունքում ջրի տակ են մնացել անտառային տարածքներ և ապօրինի կառույցներ, աղտոտվել է Սևանա լիճը, վտանգվում է ջրի որակը, ձկնատեսակները, մեծանում է լճի ճահճացման վտանգը:

Վերջին տասնամյակում՝ սկսած 2002 թվականից, Սևանա լճի մակարդակը ձեռնարկված միջոցառումների արդյունքում բարձրացել է մոտ 3,5 մետրով:

6. Գեղարքունիքի մարզում գործող 29 հանքերից առնվազն երկուսի՝ Սոթքի ոսկու հանքավայրի և Շորժայի դունիտ-պերիդոտիտային հանքավայրի անմիջական բացասական ազդեցությունը Սևանա լճի վրա, ինչպես նաև նոր հանքավայրերի հետախուզությունը և Ամուլսարի ոսկու հանքի հավանական շահագործումը, որտեղ ձևավորվող Արփա և Որոտան գետերի ջրերը թունելով տեղափոխվում են Սևանա լիճ:

Ճիշտ է՝ Սոթքի ոսկու հանքում վերամշակման գործարան կառուցելու հարցը վերջնականապես օրակարգից հանվել է, սակայն հանքի վերազինման անվան տակ հանքում կառուցված ջարդիչ տեսակավորող համալիրն իր տեսակի մեջ փոքրիկ գործարան է:

7. բարձրացել են ջրի (2-3°C-ով) և հատակի միջին ջերմաստիճանները

8. զգալիորեն կրճատվել է լճի հիպոլիմնիոնի (մերձհատակային շերտ) ծավալը, իսկ Մեծ Սևանում այն համարյա անհայտացել է

9. նվազել է ջրի միջին լուսաթափանցելիությունը (սրևային ճառագայթների թափանցելիության աստիճանը)

10. նվազել է ջրում լուծված թթվածնի կոնցենտրացիան՝ հատկապես մերձհատակային շերտում

11. նվազել է ֆոսֆորի կոնցենտրացիան, աճել են ազոտի, օրգանական ածխածնի կոնցենտրացիաները (ավազանում շեղվել է տարրերի հավասարակշռությունը)

12. Սևանա լճի էկոհամակարգի բնականոն վիճակի խաթարման արդյունքում տեղի են ունեցել հիդրոկենսաբանական ցուցանիշների փոփոխություններ.

13. Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով ափային գծի և լճի հայելու մակերեսի կրճատումները հանգեցրել են մի շարք էնդեմիկ և չվող թռչունների տեսակների կրճատմանը, թռչունների տեսակային կազմի փոփոխությանը:

14. 2008 թ-ից /2008թ., 2012թ., 2014թ., 2017թ., 2018թ./ ՀՀ Ջրային կոմիտեն 5 անգամ դիմել է ՀՀ կառավարություն Սևանա լճից հավելյալ ջրառի նախաձեռնությամբ՝ պատճառաբանելով գյուղատնտեսական կարիքների համար ջրի դեֆիցիտը: Սակայն, ոռոգման ժամանակահատվածում Սևանա լճից սնվում է Սևան-Հրազդան հիդրոկասկադը, որը բաղկացած է 7 կայանից՝ 561 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: Կասկադը շահագործում է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն: Հենց այս ընկերությունն է կառավարում Սևանա լճից բաց թողնվող ջրի փականը:

Երբևէ լուրջ հիմնավորումներ չեն տրվել և չեն իրականացվել լուրջ ուսումնասիրություններ, թե ինչ ազդեցություն կունենա լճի էկոհամակարգի վրա յուրաքանչյուր լրացուցիչ լիտր ջրի բացթողումը:

15. Աղբի ու աղբավայրերի խնդիրը

Լճի էկոհամակարգի և ջրերի որակի վրա բացասական ներգործություն ունեն լճի ավազանի բնակավայրերի կենցաղային աղբի և թափոնների անկառավարելի արտանետումները: Լճի ավազանում բացակայում են կառավարվող կենտրոնացված աղբավայրերը: Սևանա լճի մերձակայքում գտնվող 27 պաշտոնական (և բազմաթիվ այլ տարերայնորեն ձևավորված և չհսկվող) աղբավայրերը չեն համապատասխանում բնապահպանական և սանիտարական նորմերին: Այդ պատճառով ավազանում առաջացել են աղբի կուտակման բազմաթիվ վայրեր և ցրված աղբակույտեր:

16. Սևան թափվող առափնյա 43 համայնքների, որոնցից 5-ը՝ քաղաքների կոյուղաջրերի հոսքը լիճ:

Լճի ջրերի որակի վրա բացասական ներգործություն ունեն լճի ավազանի բնակավայրերի կոմունալ-կենցաղային կեղտաջրերի անարգել հոսքը դեպի լիճ:

Սևանի ջրահավաք ավազանում կառուցվել են մեխանիկական մաքրման կայաններ՝ Գավառ, Մարտունի, Վարդենիս, Ջերմուկ քաղաքներում, սակայն այդ կայանները չեն ծառայում նպատակին, օրինակ, Վարդենիսի կայանի հզորությունը չի բավարարում ամբողջ գետի ջուրը կայանով անցկացնելու համար, իսկ տեղացիների պատմելով, գետը կիսվել է, ու մասնակի է մտնում կայան, որ կարողանա հասցնել մաքրում անել:

7. Դատարանի իրավական վերլուծությունը

Լսելով դիմումատուի, վկաների, տուժողների բացատրությունները և փորձագետների եզրակացությունները, հետազոտելով գործում առկա ապացույցները՝ դատարանը եկավ այն եզրահանգման, որ սովյալ գործով կիրառելի են հետևյալ իրավական նորմերը

1. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Սևանա լճի ջրհավաք ավազան՝ տարածք, որի մակերևութային և ստորերկրյա ջրերը հոսում են դեպի Սևանա լիճ: Սևանա լճի ջրհավաք ավազանի մասն են կազմում նաև **Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարները, Արփա և Որոտան գետերի ջրհավաք ավազանները**՝ մինչև Կեչուտի ջրամբար.

2. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Սևանա լիճը և նրա էկոտոնային տարածքը պետական սեփականություն են և ենթակա չեն օտարման: Սևանա լճում և նրա էկոտոնային տարածքում գործունեությունն իրականացվում է կառավարության սահմանած կարգով»:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն. «1. Կենտրոնական գոտին «Սևան» ազգային պարկի տարածքն է, որի տարանջատման նպատակն է վերականգնել և պահպանել Սևանա լճի էկոհամակարգի բնական վիճակը՝ ջրի որակը, լճի և ափամերձ ցամաքային տարածքների բնական ու արհեստական լանդշաֆտները և կենսաբազմազանությունը:

2. Կենտրոնական գոտու տարածքը համապատասխան ռեժիմով պահպանվող սահմանափակ տնտեսական և քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ է»:

3. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն. «1. Անմիջական ազդեցության գոտին ընդգրկում է կենտրոնական գոտու սահմաններից դուրս գտնվող ջրհավաք ավազանը՝ մինչև ջրբաժան, որտեղ ցանկացած գործունեություն ուղղակի կամ անուղղակի ճանապարհով ազդում է Սևանա լճի, նրա մեջ թափվող գետերի հիդրոֆիզիկական, հիդրոքիմիական, հիդրոկենսաբանական, սանիտարաթունաբանական, հիգիենիկ և այլ որակական ու քանակական ցուցանիշների վրա:

2. Անմիջական ազդեցության գոտու տարածքը քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ է»:

4. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն. «1. Կենտրոնական, անմիջական և ոչ անմիջական ազդեցության գոտիներում արգելվում է Սևանա լճի էկոհամակարգի վրա վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած տեսակի գործունեություն:

2. Անմիջական ազդեցության գոտում արգելվում են՝

ա) էկոլոգիապես վնասակար, օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը.

բ) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը, պահեստավորումը և տեղադրումը.

գ) հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

դ) քարածխի և հեղուկ վառելանյութի բազայի վրա աշխատող 10 մեգավատտից ավելի հզորությամբ ջերմային էներգիայի աղբյուրների գործարկումը»:

5. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

ա) Սևանա լիճը և նրա ջրհավաք ավազանը, ըստ տարածքի գործառնական բնույթի, որպես մեկ ամբողջական համակարգ դիտարկելը.

բ) Սևանա լճի ջրային բացասական հաշվեկշռի բացառումը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) և լճի էկոլոգիապես անհրաժեշտ մակարդակի բարձրացման ապահովումը.

գ) կենսաբազմազանության պահպանության գերակայությունը.

դ) Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի տարածքներում էկոլոգիապես մաքուր և անվտանգ տեխնոլոգիաների, այդ թվում՝ կենսատեխնոլոգիաների պարտադիր կիրառումը.

ե) կարճաժամկետ, միջինժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակումը և դրանց բնապահպանական պետական, ինչպես նաև օրենքով սահմանված այլ փորձաքննության պարտադիր ապահովումը.

զ) բնօգտագործման ավանդական ձևերի խրախուսումը և աջակցումը:»

6. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդ. համաձայն. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման հիմնական պահանջներն են՝

ա) տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային հատակագծումը.

բ) օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների անցկացումը.

գ) բնապահպանական և բնօգտագործման միջոցառումների ծրագրային իրականացումը.

դ) տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների էկոլոգիական անձնագրավորումը.

ե) շրջակա միջավայրի վրա ազդեցության հայտարարագրումը.

զ) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը:»

7. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն. «1. Սևանա լճի էկոհամակարգի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում ջրի, հողի և բնական այլ պաշարների՝ օրենքով սահմանված կարգով հատկացման, օգտագործման և օտարման համար հիմք են ծառայում տվյալ տարածքների լանդշաֆտային և քաղաքաշինական հատակագծերը:»

8. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդ. համաձայն. «1. Սևանա լճի էկոհամակարգի բնականոն գործունեության ապահովման նպատակով Սևանա լճի էկոհամակարգում արգելվում է օգտագործել՝

ա) ջրային օրգանիզմների համար բարձր տոքսիկություն ունեցող նյութեր.

բ) սննդային շղթաներով փոխանցվող և բույսերի ու կենդանիների օրգանիզմներում կուտակվող ոչ բարձր տոքսիկություն ունեցող նյութեր.

գ) Սևանա լճի և նրա մեջ թափվող գետերի, աղբյուրների ջրերում դանդաղ քայքայվող բարձր և ոչ բարձր տոքսիկություն ունեցող նյութեր.

դ) Սևանա լճի էկոհամակարգի համար վտանգավոր, սակայն կենսահամակարգից արագ հեռացվող նյութեր.

ե) թույլատրելի նորմերը գերազանցող կենսածին տարրեր, ծանր մետաղներ կամ նրանց միացություններ:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը, սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, սահմանում է կառավարությունը՝ լիազորված մարմնի ներկայացմամբ:»

9. ՀՀ Ջրային օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ռեկրեացիոն նպատակներով իրավունք ունի ազատորեն և անվճար օգտագործել բնական մակերևութային ջրային ռեսուրսները և դրան հարակից տարածքները, քանի դեռ կառավարությունը կամ նրա

լիազորած մարմինը չի սահմանել, որ այդպիսի օգտագործումը կարող է վնասակար լինել մարդկանց առողջության կամ անվտանգության համար կամ հակասում է հասարակական շահերին»:

10. ՀՀ Ջրային օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն. «Ջրերի քանակի և որակի բարելավման, ինչպես նաև հողի, օդի, կենսաբազմազանության և ջրերի միջև փոխհարաբերությունները պահպանելու նպատակով փոխկապակցված էկոլոգիական համակարգերը և լանդշաֆտները ենթակա են պահպանման:

Ջրային ռեսուրսներին հարակից հողերի սեփականատերը կամ օգտագործողը պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել կանխելու ջրային ռեսուրսի հետ կապված էկոլոգիական համակարգին սպառնացող վտանգը»:

11. ՀՀ Ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսները ենթակա են պահպանության: Ջրային ռեսուրսի պահպանության **հիմնական պահանջներն են**

2) ջրային ռեսուրսն էկոհամակարգերի և բնական լանդշաֆտների բաղկացուցիչ մասն է, և դրա պահպանությունը պայմանավորված է տվյալ էկոհամակարգի հավասարակշռությամբ.

3) ջրային ռեսուրսը ենթակա է պահպանության ինչպես օգտագործման, այնպես էլ չօգտագործման դեպքերում.

6) ջրային ռեսուրսը ենթակա է պահպանության աղտոտումից, աղբոտումից, վարակումից և հյուծումից.

7) կեղտաջրերի արտահոսքը ջրային ռեսուրս թույլատրվում է միայն սույն օրենսգրքի պահանջների համաձայն՝ արտահոսքի թույլտվության առկայության դեպքում.

8) ջրային ռեսուրսի ակվատորիայի կամ ջրապահպան գոտու տարածքում արգելվում է կատարել որևէ տեսակի աշխատանք, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

9) ստորերկրյա ջրերի պահպանման գոտիներում սահմանափակվում կամ արգելվում են գործունեության որոշակի տեսակներ (ներառյալ՝ հողերի ոռոգումը կեղտաջրերով)՝ լուծիչներ կամ քիմիկատներ արտադրող, օգտագործող կամ պահող արդյունաբերական կամ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, տնտեսական գործունեության ընթացքում առաջացող հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների, այլ արտադրանքների և մթերքների մնացորդների աղբանոցների տեղադրումը.

10) հետախուզական, օգտագործման համար ոչ պիտանի, ճնշումային, ընդհատված օգտագործմամբ հորատանցքերը ենթակա են կոնսերվացման կամ վերացման.

11) արգելվում է ռադիոակտիվ և թունավոր թափոնների արտանետումը, արտահոսքը և թաղումը ջրային ռեսուրսում, ինչպես նաև պայթեցման աշխատանքների իրականացումը միջուկային և այլ տիպի տեխնոլոգիաներով, որոնք ընթանում են ռադիոակտիվ և թունավոր նյութերի արտանետմամբ»:

11. ՀՀ Ջրային օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն. «Ջրհավաք ավազաններում արգելվում է՝ 2) ջրային ռեսուրսների որակի վրա անուղղակի վնասակար ազդեցություն ունեցող թափոնների թաղման տեղամասերի, աղբանոցների, գերեզմանոցների և այլ օբյեկտների տեղադրումը»:

12. ՀՀ Ջրային օրենսգրքի 103-րդ հոդվածի համաձայն. «Ջրային համակարգերի կամ ջրային ռեսուրսների վրա ազդող օբյեկտների շինարարական և վերակառուցման

աշխատանքների նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պարզում է դրանց համապատասխանությունը ելակետային տվյալներին, տեխնիկական պայմաններին, նախագծման, հաշվարկների և շինարարության նկատմամբ սահմանված պահանջներին:

Ջրային համակարգերի կամ ջրային ռեսուրսների վրա ազդող օբյեկտների շինարարական և վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացնում են համապատասխան լիցենզիա ունեցող անձինք:

Շինարարական և այլ օբյեկտի նախագծման, շինարարության, վերակառուցման, օգտագործման հանձնման և օգտագործման ընթացքում պետք է հաշվի առնվի դրա ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ինչպես անմիջական տեղադրման գոտում, այնպես էլ ջրհավաք ավազանի վրա ամբողջությամբ:

Ջրային ռեսուրսի վիճակի վրա ազդող նոր տեխնոլոգիաների ներդրման դեպքում պետք է հաշվի առնվի դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ինչպես տեղադրման վայրում, այնպես էլ ջրհավաք ավազանի վրա ամբողջությամբ:

Արգելվում է բնակավայրերում աղբավայրերը շահագործման հանձնելն առանց ֆիլտրող կուտակիչների:

Արգելվում է ջրային համակարգի օգտագործման հանձնելը և օգտագործումը, որը ապահովված չէ՝

1) ջրերի աղբոտումը և աղտոտումը կամ դրանց վնասակար ազդեցությունը կանխող սարքերով.

2) վերցվող և թափվող ջրերի հաշվառման միջոցներով.

3) անհրաժեշտ ձկնապաշտպան հարմարանքներով.

4) ջրային ռեսուրսները և ջրհավաք ավազաններն աղտոտումից պահպանող կառուցվածքներով.

5) գյուղացիական անասնապահական գործունեության ոլորտի համար նախատեսված սանիտարական գոտիներով»:

13. ՀՀ Ջրային օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն. «Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է օգտագործել ջրային այն ռեսուրսը կամ դրա մասը, որը

1) պարունակում է բնական բուժիչ ռեսուրսներ.

2) գտնվում է առանձնահատուկ պահպանվող ավազանային տարածքների կազմում.

3) գտնվում է առողջարանների, զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն նպատակներով օգտագործվող վայրերի հարևանությամբ.

4) հանդիսանում է արժեքավոր տեսակի ձկների ձվադրման և ձմեռման վայր.

5) հանդիսանում է արժեքավոր կենդանիների բնակավայր կամ բույսերի աճման տեղամաս:

Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է կլանող հորատանցքերի և ջրհորների կառուցումը:»

14. ՀՀ Ջրային օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն. «Ջրհավաք ավազաններում արգելվում է՝

1) սառցածածկույթների, սառույցների, ձնածածկույթների և հարող տարածքների աղբոտումն արտադրական, կենցաղային կամ այլ թափոններով, ինչպես նաև դրանց աղտոտումը նավթամթերքով, թունաքիմիկատներով և վնասակար այլ նյութերով.

2) ջրային ռեսուրսների որակի վրա անուղղակի վնասակար ազդեցություն ունեցող թափոնների թաղման տեղամասերի, աղբանոցների, գերեզմանոցների և այլ օբյեկտների տեղադրումը»:

15. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն. «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ կարող են առանձնացվել՝

բ) Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, ինչպես նաև ջրային ռեսուրսների օգտագործմանն առնչվող հիդրոտեխնիկական կառուցվածքների տարածքներում.

դ) մեկից ավելի վարչատարածքային միավորների շահերին առնչվող քաղաքաշինական օբյեկտների տարածքներում»:

1. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք միջազգային կոնվենցիաներ, ստանձնած պարտավորություններ

- «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» /Օրհուս/ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր Կողմ ընդունում է անհրաժեշտ օրենսդրական, կանոնակարգող և այլ միջոցներ, ներառյալ միջոցներ՝ ուղղված սույն կոնվենցիայի տեղեկատվության մատչելիությանը, հասարակայնության մասնակցությանը, արդարադատության մատչելիության դրույթների իրականացումը կարգավորող նորմերի համատեղելիությանը, ինչպես նաև պատշաճ միջոցներ՝ ուղղված այդ դրույթների կիրառման ապահովմանը՝ սույն Կոնվենցիայի դրույթների իմպլեմենտացիայի նպատակով՝ հստակ, թափանցիկ և համաձայնեցված դաշտ ձևավորելու համար:
- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանման մասին» /Բեռն/ կոնվենցիայի, 5-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի համապատասխան և անհրաժեշտ օրենսդրական ու վարչական միջոցներ՝ 1-ին հավելվածում նշված վայրի ֆլորայի տեսակների հատուկ պահպանությունն ապահովելու նպատակով: Պետք է արգելվի նման բույսերը դիտավորությամբ պոկելը, հավաքելը, կտրելը կամ արմատախիլ անելը:
- ՄԱԿ –ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի շրջանակներում ընդունված «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումը» (INDC) փաստաթղթով (ՀՀ կառավարության 10.09.15թ. հ.41-Ս որոշում) Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունը՝ մինչև 2050 թվականը երկրի անտառապատվածությունը հասցնել 20.1%-ի, կատարելու համար: Նախատեսված է «երկրի արտաքին պարտք-բնություն» հաշվանցման մեխանիզմ՝ անտառի վերականգնման համար, ինչը անհրաժեշտ է կիրառել:
- «Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որքանով դա հնարավոր և նպատակահարմար է.

ա/ համապատասխան ընթացակարգեր է ներդնում, որոնց համաձայն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում է պահանջվում իր կողմից նախատեսվող ծրագրերի նկատմամբ, որոնք կարող են զգալի բացասական

ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա՝ այդպիսի ազդեցության հետևանքները կանխատեսելու և նվազեցնելու նպատակով, և, նպատակահարմարության դեպքում, ապահովում է այդպիսի ընթացակարգերի իրականացմանը հանրության մասնակցության հնարավորությունը,

բ/ համապատասխան միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար իր կողմից իրականացվող այն ծրագրերի և քաղաքականության էկոլոգիական հետևանքների հաշվի առնելը, որոնք կարող են զգալի բացասական ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա»:

- «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «2. Չգտելով սույն Կոնվենցիայի նպատակների իրականացմանը, Կողմերը.

ա/ համալիր մոտեցում են ընդունում անապատացման և երաշտի ֆիզիկական, կենսաբանական և սոցիալ-տնտեսական ասպեկտների նկատմամբ,

գ/ աղքատության արմատապես վերացմանն ուղղված ռազմավարություններն ինտեգրացվում են անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների նվազեցման ջանքերի մեջ,

դ/ նպաստում են Կոնվենցիայի Կողմ հանդիսացող ազդեցության ենթարկված պետությունների միջև համագործակցությանը շրջակա միջավայրի պաշտպանության և հողային ու ջրային ռեսուրսների պահպանության ոլորտներում, քանի որ այդ համագործակցությունը նպաստում է անապատացման և երաշտի դեմ պայքարին»:

- Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիան հիմնվել է այն գաղափարի վրա, որ մարդու կյանքի որակն ուղղակի կախվածության մեջ է նրան շրջապատող միջավայրի որակից և, հետևաբար, կարևոր են ոչ միայն արժեքավոր բնական և մշակութային լանդշաֆտները, այլ նաև առօրյա միջավայրը, լքված և դեգրադացված տարածքները. Լանդշաֆտներն են ձևավորում երկրի ինքնատիպ պատկերը, արտահայտում բնակվող մարդկանց արժեքային համակարգը, ինչպես նաև խթանում կամ արգելակում են տնտեսական զարգացումը: Ըստ Կոնվենցիայի լանդշաֆտը ճանաչվում է որպես հանրության և անհատական բարեկեցության (ֆիզիկական, ֆիզիոլոգիական, հոգեբանական և ինտելեկտուալ իմաստով) նախապայման, ինչպես նաև կայուն զարգացմանն ու տնտեսական գործունեությանը նպաստող ռեսուրս: Կոնվենցիայի համաձայն անտառային լանդշաֆտների վերացումը նույնպես կարող են առաջացնել տեսողական /վիզուալ/ աղտոտում: «Վիզուալ աղտոտման ներազդեցությունը մարդու հոգեբանական վիճակի վրա գնահատվում է որպես էսթետիկական բնույթի գործոն և համարվում ոչ պակաս վտանգավոր, քան շրջակա միջավայրի աղտոտման այլ տեսակները: Առօրյա կյանքում տեսողական աղտոտումից առաջացող ընկճվածության արդյունքում մարդը մշտապես գտնվում է հոգեբանական անհարմարավետության (դիսկոմֆորտի) վիճակում, ինչը բացասաբար է անդրադառնում մարդու տրամադրության և առողջության վրա»:

Ելնելով վերը նշվածից, կատարելով բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և միջազգային նորմերի պահանջներով՝ ՀՀ Բնապահպանական հանրային դատարանը

ՎՃՌԵՑ

1. Սևանա լճի՝ որպես Հայաստանի Հանրապետության բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի խախտումները, որոնք խաթարել են Հայաստանի էկոլոգիական անվտանգությունը, հանգեցրել են էկոհամակարգի ոչնչացմանը, նպաստել են սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը, որոնց արդյունքում պատճառվել է անդառնալի էկոլոգիական և առանձնապես խոշոր չափերի տնտեսական վնաս, ճանաչել որպես բնության, մարդու և պետության դեմ ուղղված հանցագործություն:

2. Ստեղծված իրավիճակի և ՀՀ օրենսդրության խախտումների համար պատասխանատու ճանաչել ՀՀ կառավարությանը, ՀՀ բնապահպանության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություններին, ՀՀ Ջրային կոմիտեին, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովին, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:

2. Դիմել ՀՀ Դատախազությանը՝ պահանջելով.

ա/ Հարուցել քրեական գործ՝ Սևանա լճի ափերի տարածքների ապօրինի օտարում և կառուցապատում թույլ տված պաշտոնատար անձանց նկատմամբ՝ վերացնելով խախտումները և վերականգնելով դրա հետևանքով պետությանը պատճառած վնասները

բ/ Ստուգել Սևանա լճի առափնյա տարածքների վարձակալության պայմանագրերի օրինականությունը

գ/ Ստուգել Սևանի սիգի և այլ ձկնատեսակների վերամշակման և պահածոյացման արտադրամասերի գործունեության օրինականությունը, հայտնաբերել օրինախախտումները և պատասխանատվության ենթարկել մեղավոր անձանց

դ/ Ստուգել «Արփա-Սևան» թունելի վերանորոգման համար 2010-2017թթ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ տրամադրված և Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի 10 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային գումարների նպատակային ծախսումը, խախտումներ հայտնաբերելու դեպքում, պատասխանատվության ենթարկել մեղավոր անձանց:

ե/ Ստուգել ՀՀ Կառավարության որոշումներով 2013թ-ից սկսած Սևանա լճի շրջակայքում՝ ջրածածկման ենթակա տարածքներում, անտառմաքրման աշխատանքների իրականացման համար պետական բյուջեից տարեկան 125,4 միլիոն դրամ, և ձկան պաշարները արժեքավոր ու հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովման նպատակով 60,0 միլիոն դրամ հատկացված գումարների նպատակային ծախսումը, խախտումներ հայտնաբերելու դեպքում պատասխանատվության ենթարկել մեղավոր անձանց:

զ/ Ստուգել ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Սևան թափվող գետերի վրա փոքր ՀԷԿ-երի կառուցման, Սևանա լճի ջրհավաք ավազանում հանքերի /Սոթք, Շորժա, Ամուլսար և այլ/ շահագործման համար տրված փորձաքննական դրական եզրակացությունների օրինականությունը /հաշվի առնելով Սևանա լճի էկոհամակարգի վրա ազդեցությունը/, օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում, պատասխանատվության ենթարկել մեղավոր անձանց:

է/ Քննություն կատարել Սևանի կոլեկտորի գույքի ոչնչացման և հափշտակության վերաբերյալ և պատասխանատվության ենթարկել մեղավոր անձանց:

թ/ Ստուգել ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների համար «Սևան-Հրազդան-ջրառ» ՓԲԸ-ին հատկացված գումարների նպատակային ծախսումը, ջրի կորուստների պատճառները, խախտումներ հայտնաբերելու դեպքում, պատասխանատվության ենթարկել մեղավոր անձանց:

4. Դիմել ՀՀ կառավարությանը՝ պահանջելով.

1.

ա/ Վերահսկել - «Սևանա լճի մասին», «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման մասին» ՀՀ օրենքների կիրարկումը և ՀՀ օրենսդրության խախտում թույլ տված անձանց ենթարկել պատասխանատվության:

բ/ Վերահսկել Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2019թ. տարեկան ծրագրի իրականացումը և բյուջեից հատկացված գումարների նպատակային ծախսումը, ստուգել նախորդ տարիների ծրագրերի իրականացումը և գումարների նպատակային ծախսումը:

գ/ Չնախատեսել Սևանա լճից լրացուցիչ ջրի բացթողումներ մինչև լճի մակարդակը չհասնի՝ ծովի մակերևույթից 1903,5մ նիշին: Բացառել էներգետիկ նպատակով ջրի բացթողումը և լճի բացասական հաշվեկշիռը:

դ/ Ստեղծել «Սևան» ազգային պարկին հարակից համայնքներում բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխանող աղբավայրեր:

ե/ Կազմակերպել Սևանա լճի ջրհավաք ավազանի համայնքների Սևան թափվող կոյուղաջրերի մաքրումը:

զ/ Արգելել Սևանա լիճ թափվող գետերի վրա նոր ՓՀԷԿ-երի կառուցումը և միջոցներ ձեռնարկել կառուցված ՓՀԷԿ-երի փակման ուղղությամբ:

է/ Արգելել Սևանա լճի ջրհավաք ավազանում նոր հանքերի շահագործումը, միջոցներ ձեռնարկել գործող հանքերի՝ շրջակա միջավայրին պատճառող վնասը նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

ը/ Հանձնարարել ՀՀ բնապահպանության նախարարությանը մշակել և իրականացնել ծրագիր նախարարության կողմից կատարված մշտադիտարկման արդյունքում հայտնաբերված շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման և կանխարգելման ուղղությամբ:

թ/ Ստուգել «Սևանի իշխան» և «Սևան Ակվա» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից համալիր ծրագիրն իրականացնելու նպատակով Կառավարության պահուստային ֆոնդից 2013-2017թթ. հատկացված է 9,0 միլիարդ դրամ գումարի նպատակային օգտագործումը և ծրագրի իրականացման օրինականությունը:

ժ/ Վերահսկել Սևանա լճում ցանցավանդակային ձկնաբուծության ծրագրի իրականացումը և Կառավարության կողմից հատկացված գումարների նպատակային ծախսումը

ժա/ Գործարկել Որոտան-Արփա թունելը

ժբ/ Ստուգել անտառմաքրման աշխատանքների իրականացման, արժեքավոր ու հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովման համար պետական բյուջեից հատկացված գումարների նպատակային ծախսումը

ժգ/ Արգելել Սևանի սիգի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների գործունեությունը:

ժդ/ Մշակել «Սևանա» լճի մասին» ՀՀ օրենքի մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ և ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:

2. Հանձնարարել՝

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

ա/ Միջոցներ ձեռնարկել Սևանա լճի առափնյա տարածքներում հողերի ապօրինի օտարման և վարձակալության պայմանագրերի լուծման համար

բ/ Միջոցներ ձեռնարկել Սևանա լճում ձկան ապօրինի որսը կանխարգելելու ուղղությամբ

դ/ Սևանա լճի շուրջ իրականացնել անտառատնկման աշխատանքներ

ե/ Սևանա լճի ափամերձ տարածքներում նոր օբյեկտների նախագծային փաստաթղթերը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթարկելիս՝ պարտադիր պայման նախատեսել այդ օբյեկտների կեղտաջրերի մաքրումը՝ կենսաբանական մաքրման կայանների միջոցով: /ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 23-ի «Սևանա լճի ջրհավաք ավազանի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիների բնակավայրերում և բնակավայրերից դուրս օբյեկտների շահագործումից առաջացող կեղտաջրերի մաքրման մասին» N 397-Ն որոշում/

զ/ Արգելել «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն և տնտեսական գոտիներում առանց կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման կեղտաջրեր առաջացնող օբյեկտների շահագործումը

է/ Պատշաճ վերահսկողություն ապահովել «Սևան» ազգային պարկի արգելոցային գոտիների ռեժիմի պահպանման նկատմամբ

ը/ Ապահովել Ազգային պարկի արգելոցային գոտիներում՝ Սևանի իշխան, Սևանի բեղու, Սևանի կողակ էնդեմիկ ձկնատեսակների բնական զարգացումն ու ձվադրումն ապահովող ուղիների պահպանությունը

թ/ Պահպանել և վերականգնել «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրում գիհիների և կաղնու տեսակների բնական միջավայրը:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ

ա/ Միջոցներ ձեռնարկել ռոռզման ցանցի վերանորոգման համար՝ բացառելով ջրի կորուստները

բ/ Բացառել Սևանա լճից ջրի բացթողումները, եթե առկա է բացասական հաշվեկշիռ:

գ/ Հսկողություն իրականացնել՝ օրենքով սահմանված կարգով, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության նկատմամբ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ

ա/ Խստացնել վերահսկողությունը «Սևան» ազգային պարկի և Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքներում:

բ/ Կատարել իրականացված ստուգումների վերլուծություն և յուրաքանչյուր տարվա վերջում ներկայացնել հետագա խախտումների կանխարգելմանն ուղղված առաջարկներ:

գ/ Հրապարակել ստուգումների ստուգման փաթեթը, մասնավորապես, ստուգման ակտի պատճենը, կամ ամբողջական բովանդակությունը, իրավախախտման արձանագրությունը, ստուգման արդյունքում տրված հանձնարարականները, այլ գերատեսչություններին ներկայացված միջնորդագրերը կամ առաջարկությունները, շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկները բոլոր բաղադրիչներով:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ

ա/ Խստացնել վերահսկողությունը Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքներում շինարարական հատուկ թույլտվությունների տրամադրման և շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ:

բ/ Կատարել իրականացված ստուգումների վերլուծություն և յուրաքանչյուր տարվա վերջում ներկայացնել հետագա խախտումների կանխարգելմանն ուղղված առաջարկներ:

զ/ Հրապարակել ստուգումների ստուգման փաթեթը, մասնավորապես, ստուգման ակտի պատճենը, կամ ամբողջական բովանդակությունը, իրավախախտման արձանագրությունը, ստուգման արդյունքում տրված հանձնարարականները, այլ գերատեսչություններին ներկայացված միջնորդագրերը կամ առաջարկությունները:

5. Դիմել ՀՀ Ազգային անվտանգության խորհրդին՝ պահանջելով.

ա/ Ուսումնասիրել վճռում ներկայացված խնդիրները

բ/ Կազմակերպել մասնագիտական քննարկումներ Սևանա լճի վերաբերյալ

գ/ Մշակել առաջարկությունների փաթեթ Սևանա լճի անվտանգության վերաբերյալ՝ ՀՀ կառավարություն ներկայացնելու համար

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավորներ՝

Ն.Վարդանյան

Հ.Խառատյան

Զ.Հովհաննիսյան

Ի.Զարաֆյան

Ս.Բաղեյան